

Եթե Փաշինյանը մասնակցում է ինչ-որ համաժողովի կամ՝ «Կրթվելը նորաձեւ է» հավաքներին, մարդկանց մինչեւ անդրավարտիքը հանում են, հեռախոսները խլում, ստուգում են պայուսակները, մետաղորսիչներով են անցկացնում, իսկ այստեղ բերել էին մի միջավայր, որտեղ մարդիկ ուրախ չեն նրան տեսնելու համար: Ինչո՞ւ էր գնացել:

Կարդացեք՝ էջ 4



Խնդիրն այն չէ, որ Օվերչուկը Հայաստանին կամ Հայաստանի իշխանությանն ինչ-որ բան է պարտադրում. նա ընդամենը ասում է՝ Հայաստանի հասարակությունը թող որոշի՝ առաջնորդվելո՞ւ է Հայաստանի տնտեսական շահերով, թե՞ արտաքին թելադրանքով, նա հրապարակային ասել է այն, ինչ Փաշինյանին փակ դռների հետեւում ասել է Պուտինը:

Կարդացեք՝ էջ 6



Կարինե Սմբատյանը «Ուժեղ Հայաստանի» պատգամավորի թեկնածու է: Այդ մասին իմացել են իշխանություններն ու իրենց ոճին հավատարիմ՝ հետեւել են նրա եւ նրա ընտանիքի գործունեությանը: Ու քանի որ մասնագիտական գործունեության մեջ անօրինական բան, թերացում չեն գտել, այլ պատճառներ են որոնել՝ պաշտոնից ազատելու համար:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am
ISSN 1829-2372
9 771829 237007 26054

# Հրապարակ

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 54 (4189), 4 ապրիլ, շաբաթ, 2026

www.hraparak.am

Իշխանությունն ավարտին է հասցնում իր նախընտրական շտաբների ձեւավորումը, որոշել են յուրաքանչյուր համայնքում մեկական շտաբ ունենալ, եթե համայնքը շատ մեծ է՝ երկու շտաբ: Շտաբի պետեր են նշանակվում գործող համայնքապետերը, ովքեր իրենց գործունեության ընթացքում եւ ի պաշտոնե ամենաշատն են առնչվել տեղի բնակչությանը, լծակներ ունեն եւ գիտեն, թե ինչպես ուղղորդեն ժողովրդին, որ ՔՊ-ին ընտրեն: Անգամ եթե համայնքապետը ՔՊ-ական չէ, այլ՝ անկուսակցական, նրան առաջարկում են ղեկավարել շտաբը եւ ապահովագրել իր հետագա պաշտոնավարումը: Նույնիսկ նախկին հանրապետականները, այլ ուժերի ցուցակով ընտրվածները կարող են ապացուցել իրենց հավատարմությունը ՔՊ-ին: Օրինակ, Ապարանի համայնքապետ Կարեն Եղիազարյանին՝ «Գնթունիկի» տիրոջն են առաջարկել, եւ նա կարծես համաձայնել է, չնայած նախորդ ընտրություններին ընդդիմադիր էր: 2021-ից սկսած, նա իշխանությունների հետ ջերմ հարաբերություններ է ստեղծել: Համայնքային շտաբների աշխատանքները համակարգվելու են մարզային շտաբի կողմից, որոնք ղեկավարելու են մարզպետները: Թերեւս բացառություն կլինի Սյունիքը. Գորիսի շտաբի պետը լինելու է պատգամավոր Արմեն Խաչատրյանը, Կապանինը՝ ՀՊՄԿ կառավարության ներկայացուցիչ Նարեկ Բաբայանը, Սիսիանինը՝ պատգամավոր Կարեն Համբարձումյանը, Մեղրինը՝ համայնքապետ Խաչատուր Անդրեասյանը, Քաջարանինը՝ ավագանու ՔՊ անդամ Արմեն Առաքելյանը:



ՔՊ նախընտրական ցուցակի պատվավոր 50-յակում տեղ զբաղեցրած Արաքսյա Վարդանյանը, պարզվում է, ոչ վաղ անցյալում եղել է Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանի թիմակիցը եւ 2021 թ. ընտրություններին մասնակցել է Ազատական կուսակցության ցուցակով: Վարդանյանը, որն այժմ ՔՊ կուսակցության գրասենյակում է աշխատում եւ դրա շնորհիվ է մեծ թվով ձայներ ստացել ներկուսակցական ընտրություններում, 2021 թ. ընտրություններից առաջ Փաշինյանի դեմ կոշտ գրառումներ է արել: Օրինակ, ընտրություններից 2 օր առաջ նա գրել է, որ կանգնած ենք պետականությունը կորցնելու վտանգի առաջ եւ կարող ենք «ծնկի գալ թույլ ու տկար ոտքերով», ու կոչ է արել ընտրել իր կուսակցությանը: Ի դեպ, ՔՊ-ում նրան լավ աչքով չեն նայում, ինչպես մյուս ճամբարափոխներին, հատկապես՝ կուսակցության հինաբնակները, որոնցից շատերն այսօր ստվերում են մնացել:

## Կալանքի մեսիջները

Դավիթ Մինասյանի կալանքով Նիկոլ Փաշինյանը մի քանի հարց է միանգամից լուծում: Առաջինը, բնականաբար, հանրության աչքը վախեցնելն է, որ ոչ ոք չհամարձակվի իրեն թթու խոսք ասել եւ իր վայրենի թիկնազորին որեւէ կերպ հակադրվել: Նաեւ թիկնազորին է թեւ տալիս, որ անարգել ու անպատիժ գործելու եք, քանի դեռ ինձ եք պաշտպանում: Չէ՞ որ առջեւում ընտրարշավ է, եւ, դատելով այսօրվա ակտիվությունից, նա դեռ 2 ամիս «շորը չի հանելու հագից»՝ ցուպը ձեռն առած, անցնելու է բոլոր մարզերով՝ աղմուկ, իրարանցում, բեմականացումներ, խոստումներ, փիառի բոլոր թույլատրելի ու անթույլատրելի մեթոդներն է կիրառելու, որ այս քաոսից շշմած, կողմնորոշումը կորցրած, վախեցած ու շփոթահար ժողովուրդը՝ անգամ չուզենալով, գնա եւ ՔՊ ընտրի: Մյուս խնդիրը, որ լուծեցին 18-ամյա խոստումնալից երիտասարդին բերդ ուղարկելով, այն է, որ հասարակությանը ցուցադրեն՝ օրենքը Հայաստանում ինքն է, դատավորն ինքն է, արդարադատությունն ինքն է, եւ մեզանում «չկա դատավոր, որ իր ասածը չանի»: Անգամ անմեղ, ոչ մի հանցանք չկատարած եւ կալանքի ոչ ենթակա երիտասարդին կալանավորելը, որը, թվում է՝ բարոյականությանը եւ մարդկային խղճին դեմ քայլ էր, ու չպետք է մեզանում լիներ նման երկոտանի, որ գնար այդ քայլին, կարողացան իրականացնել: Եվ արեցին մարդկային կերպարը կորցրած մի ստրուկ դատավորի ձեռքով: Սրանով նաեւ մեսիջ է փոխանցում բոլոր դեռահասների ծնողներին՝ զսպեք ձեր երեխաներին, եթե չեք ուզում նրանք բանտում հայտնվեն, մեսիջ է փոխանցում առողջական խնդիրներ ունեցողներին՝ ոչ մի հիվանդություն չի խանգարի ձեզ բանտ ուղարկելուն, եթե դուք իմ դեմ դուրս գաք: Մեսիջ է փոխանցում իր ենթականերին՝ եթե այս աղմուկն ինձ չխանգարեց, որ երիտասարդին կալանավորեմ, ի՞նչն է խանգարելու ինձ, որ ձեզ «բռժ չսարքեմ»:



*Մոսկվա Նիկոլ Փաշինյանի այցը յուրօրինակ ճամփաբաժան է դարձել: Ռուսաստանում հասկացել են, որ Փաշինյանն այլեւս ամբողջությամբ Արեւմուտքի կամակատարն է՝ ընդդեմ Ռուսաստանի, եւ հիմա «բացատրական աշխատանք» են տանում ռուսաստանաբնակ բիզնեսմենների հետ, որ այլեւս չեն հանդուրժելու նրանց կրավորական կեցվածքը. նրանք պետք է վերջնական որոշում կայացնեն. կա՛մ կոշտ արձագանքեն ՀՀ իշխանությունների ապազգային գործողություններին, խաղեր չտան, մասնավորապես՝ հստակ արտահայտվեն Փաշինյանի հակաեկեղեցական պայքարի մասով, կա՛մ պատրաստ լինեն, որ լուրջ դժվարություններ են ունենալու Ռուսաստանում: ՌԴ հայկական էլիտան առաջիկա ամիսներին ստիպված կլինի դիմել ոչ այնքան հրապարակային հայտարարությունների, որքան կոնկրետ գործողությունների: Ի դեպ, հայ հասարակությանը եւս ժամանակ է տրվել՝ որոշելու՝ Փաշինյանին պահո՞ւմ են՝ առաջիկա նյութական եւ այլ զրկանքների գնով, թե՞ մերժում են:*

## «ՍՊԱՅԿԱՆ»՝ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Մոտ մեկ ամիս առաջ տեղեկություն տարածվեց, որ գյուղմթերքի արտահանմամբ զբաղվող հայկական «Սպայկա» ընկերության սեփականատեր Դավիթ Ղազարյանն ուզում է ընդդիմադիր կուսակցություն ստեղծել՝ «Զեկույց» անունով: Ըստ լուրերի՝ այդ որոշումը նա կայացրել էր ՌԴ հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի առաջարկով: Դրանից առաջ «Սպայկան» խնդիրներ էր ունեցել ՌԴ իրավապահների հետ. բեռնատարների մուտքը Ռուսաստան մոտ կես տարի արգելված կամ բարդացված էր: Աբրահամյանը՝ ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Անտոն Վայնոյի միջամտությամբ, օգնել էր՝ լուծելու այդ խնդիրները: Գրել էինք, որ այդ խնդիրները ծագել էին այն բանից հետո, երբ Հայաստանում ԱՄՆ դեսպանն այցելել էր «Սպայկա», եւ ջերմ հանդիպումից հետո հաղորդագրություն էին տարածել՝ հարուցելով ռուսների զայրույթը: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Դավիթ Ղազարյանը, ՀՀ իշխանությունների ճնշման ներքո, փոշմանել է եւ այլեւս կուսակցություն բացելու մասին չի մտածում, այլ պատրաստակամություն է հայտնել՝ առաջիկա ընտրություններին աջակցել Նիկոլ Փաշինյանին, ինչի պատճառով կրկին սանկցիաների տակ է ընկել Ռուսաստանում: Հիմա էլ արգելել են «Սպայկայի»՝ ծաղիկներով բեռնված բեռնատարների մուտքը ՌԴ՝ պատճառաբանելով, թե այդ ծաղիկները ներկրվել են եվրոպական երկրներից՝ հայկական արտադրանք չեն:

# ԿԱՌԱՋԱՐԿԵԻ, ՈՐ ՊՈՒՏԻՆԸ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆ ՏՐԱՄԱԴՐԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

*Հարցազրույց ռուս քաղաքագետ, քաղաքագիտության դոկտոր* ***Միխայիլ Ալեքսանդրովի*** *հետ*

**- Ձեր գնահատմամբ, ինչո՞ւ Փաշինյանը նախաձեռնեց վերջին այցը Մոսկվա, նպատակը ո՞րն էր: Մեզ մոտ տարբեր կարծիքներ կան, մեկն այն է, թե գլխավորը Ռուսաստանի կողմից երկաթգծի կոնցեսիոն կառավարումը դադարեցնելու հարցն էր:**

- Կարծում եմ՝ երկաթգիծը չէր գլխավոր հարցը: Փաշինյանը, հավանաբար, զգում է, որ ընտրություններից առաջ Հայաստանում չունի բավարար աջակցություն, զգում է հասարակության դժգոհությունը, վստահ չէ, որ իր կուսակցությունը կկարողանա հաղթել եւ ստանալ բացարձակ մեծամասնություն այդ ընտրություններում, եւ, հավանաբար, ուզում էր շոշափել ռուսական կողմի վերաբերմունքը, փորձել այնպես ներկայացնել իրավիճակը, որ Ռուսաստանը դեմ չէ, որ ինքը շարունակի պաշտոնավարել, սակայն, ինչպես տեսանք, չստացվեց: Պուտինի աջակցությունը ստանալ չհաջողվեց: Ինձ դուր եկավ Պուտինի արտահայտությունը՝ «ով էլ որ հաղթի հաջորդ ընտրություններում...»: Պուտինը չասաց՝ ես Ձեզ ցանկանում եմ հաջողություն ապագա ընտրություններում կամ մի նման բան: Նա հասկացրեց, որ իրեն այլ ընտրությունն էլ ձեռք կտա եւ, ըստ ամենայնի, ավելի հետաքրքիր կլինի իր համար: Պուտինը Հայաստանում պրոռուսական ուժերի բռնաճնշումներին դեմ արտահայտվեց: Այդ ռեպրեսիաները, որոնք Փաշինյանն իրականացնում է Եվրամիության դրդումով՝ փորձելով կրկնել Մոլդովայի նախագահ Սանդուի տարբերակը, իհարկե, Մոսկվայում լուրջ տհաճություն են առաջացնում, ինչպես եւ՝ Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ ճնշումները: Դուք տեսաք, թե այստեղ հայկական դեսպանատան մոտ հայերն ինչ բողոքի ակցիաներ արեցին: Բայց պետք է հասկանալ, որ Փաշինյանը կրակի հետ է խաղում, որովհետեւ Մոլդովային, որը Եվրոպայի եւ բարեկամական Ռումինիայի սահմանին է, անգամ եթե հաշվի առնենք, որ ճնշեցին ռուսական ուժերին ու Սանդուին բերեցին իշխանության, որպես ազգի՝ ոչինչ չի սպառնում, ով էլ լինի իշխանության ղեկին: Ուստի նա կարող էր իրեն նման կուլբիտ (քաղաքական տրյուկ, կտրուկ շրջադարձ՝ Ս. Ս. ) թույլ տալ: Հայաստանն իրեն չի կարող նման բաներ թույլ տալ, որովհետեւ գտնվում է պայթյունավտանգ ռեգիոնում: Մի կողմից Թուրքիան է, մյուսից՝ Ադրբեջանը, Իրանում պատերազմ է: Ինչով կավարտվի այն՝ դեռ հայտնի չէ, բայց արդեն պարզ է, որ ԱՄՆ-ն չի կարող ամբողջությամբ կոտրել Իրանին: Թրամփի ուղին վտանգված է, եւ Փաշինյանն Իրանի հետ կարող է զինված կոնֆլիկտ սադրել:

**- Այդպիսի մտավախություններ արդեն հնչում են մեզանում: Ձեր կարծիքով, Սամվել Կարապետյանը կարո՞ղ է մասնակցել ընտրություններին՝ լինելով ՌԴ քաղաքացի: Փաշինյանը դա է ասում Պուտինին:**

- Փաշինյանն ասում է, թե Կարապետյանն իրավունք չունի առաջադրվելու եւ մասնակցելու ընտրություններին, որովհետեւ Ռուսաստանի քաղաքացիություն ունի եւ այլն, բայց ի՞նչն է խանգարում Կարապետյանին՝ ընտրություններից հետո անմիջապես հրաժարվել ՌԴ քաղաքացիությունից: Այդ ժամանակ նա կարող է վարչապետ դառնալ. կարծում եմ, սա զուտ տեխնիկական հարց է:



**- Իսկ ի՞նչ է լինելու երկաթգծի հետ: Փաշինյանը կարո՞ղ է դադարեցնել, ըստ Ձեզ, այդ պայմանագիրը, որը, եթե չեմ սխալվում, դեռ 12 տարի ժամանակ ունի, եւ, առհասարակ, ի՞նչ տնտեսական սպառնալիքներով է դա հղի: Պուտինը երբեք նախկինում այդքան միանշանակ եւ կտրուկ չի եղել. այս անգամ նա հստակ հասկացրեց Փաշինյանին, որ կարող են լինել կոշտ տնտեսական հետեւանքներ, նույնիսկ հիշեցրեց գազի արտոնյալ գնի մասին, որը ԵՄ-ին անդամակցելու դեպքում այլեւս չի լինի: Հայաստանի նկատմամբ հնարավո՞ր են սանկցիաներ՝ հակառուսական քաղաքականության հետեւանքով:**

- Սանկցիաները, ըստ էության, արդեն իրագործվում են: Հայկական ապրանքների ստուգումներ են սկսվել, որովհետեւ Հայաստանը Եվրամիության երկրներից ռեէքսպորտ էր անում՝ ապրանքներ էր բերում: Դրանից հայկական բիզնեսը շահում էր, Ռուսաստանն էլ աչք էր փակում՝ հասկանալով, որ հայերին պետք է օգնել՝ գոյատեւելու բարդ իրավիճակում: Բայց հիմա եթե Փաշինյանն այսպիսի գիծ է տանում, սա համապատասխան հետեւանքներ է ունենալու: Եթե նա հաղթի ընտրություններում, դա ավելի մեծ վնաս է բերելու հայերին, իհարկե: Ես դեմ եմ Հայաստանի տնտեսական բլոկադային, բայց ընտրություններից առաջ հնարավոր է լրացուցիչ միջոցներ լինեն: Հայերը պետք է հասկանան, որ այդ մարդը չպետք է շարունակի ղեկավարել, նա ուղղակի սպանելու է հայոց պետականությունը: Սանկցիաներ կլինեն, եւ գազը կթանկացնեն, եւ շուկան կփակեն, եւ հայկական բիզնեսն այստեղ կճզմեն: Երկու աթոռի վրա նստել հնարավոր չէ: Այնպես որ, Փաշինյանին աջակցող հայկական բիզնեսը, որը հույս ունի, որ այստեղ եկամուտներ է ունենալու, պետք է հասկանա, որ շատ բարդ իրավիճակում է հայտնվելու, այդ թվում՝ երկաթգծի կոնցեսիան դադարեցնելու հետեւանքով: Այդ երկաթգիծը տանում է Ադրբեջան, իսկ դեպի Ռուսաստան ոչ մի շարժ չի լինի, եթե նրանք վերցնեն դա: Օվերչուկը պարզ հասկացրեց դա: Եթե նրանք մտածում են, թե Ադրբեջանով Ռուսաստան ապրանքներ են տանելու, ապա ասեմ՝ նման բան չի լինի, բոլոր ճանապարհները դեպի Ռուսաստան կփակվեն: Այնպես որ, Փաշինյանի խաղը փորձանքի է բերելու:

**- Նա փորձում է ներկայացնել, թե Պուտինի հետ հանդիպումը դրական արդյունքներ է ունեցել: Դուք տպավորություն չունե՞ք, որ սա Փաշինյանի վերջին այցն էր Մոսկվա: Կա՞ն նման մեկնաբանություններ հիմա:**

- Ես վստահ չեմ, որ սա վերջինն էր: Ես կառաջարկեի, որ Պուտինը Փաշինյանին քաղաքական ապաստան տրամադրեր Ռուսաստանում: Ես չգիտեմ՝ այդ մասին խոսել են նրանք, թե ոչ, բայց չի բացառվում, որ Փաշինյանն ընտրություններից առաջ եկել էր այդ մասին պայմանավորվելու: Ավելի լավ կլինի, իհարկե, նրան հնարավորություն տալ, որ նա խաղաղ հեռանա, որ ընդդիմությունն ազնիվ պայքարում հաղթի, եւ Փաշինյանն էլ առանց ընտրություն կեղծելու, առանց ժողովրդական ընդվզման՝ լուռ հեռանա: Թող ապրի, ասենք, Ռոստովում, թող հանգիստ ապրի: Մենք դրանից չենք աղքատանա: Նա, կարծում եմ, այնքան է գողացել այս ընթացքում, որ նրան ու նրա երեխաներին կբավականացնի: Ուղղակի պետք է նրան հնարավորություն տալ, որ խաղաղ հեռանա, ինչպես հեռացավ Յանուկովիչը, որը Ռուսաստանի բարեկամը չէր, բայց նրան տրվեց հեռանալու ու Ռուսաստանում հանգիստ ապրելու հնարավորություն: Այնպես որ, այդ հանդիպումը դրական գնահատել չի կարելի: Ես չգիտեմ, թե կուլուարներում ինչ են խոսում, ինչ է նրան Պուտինը խոստացել, բայց, բացի քննադատությունն ու նախազգուշացումները, Պուտինի կողմից պահանջներ չհնչեցին: Ինձ դուր չեկավ միայն ՀԱՊԿ-ի թեման: Իհարկե, ժամանակին Ռուսաստանը սխալ որոշում ընդունեց, չպաշտպանեց Հայաստանին ադրբեջանական հարձակման ժամանակ՝ 2022 թվականին: Պետք էր գոնե քաղաքական հայտարարություն անել եւ դատապարտել Ադրբեջանի կողմից հայկական տարածքների գնդակոծումները: Դա դժվար չէր անել, բայց մեր ղեկավարության սերն Ալիեւի նկատմամբ, հավատը, որ Ալիեւը կդառնա Ռուսաստանի դաշնակիցը, այդ խորապես սխալ գիծը, որը տարվում էր այն ժամանակ, բերեց սխալ որոշումների եւ հնարավորություն տվեց Փաշինյանին արդարացնել՝ անվտանգային հարցերում վերակողմնորոշվել դեպի Եվրոպա: Շարունակել ցույց տալ, թե ոչինչ չի եղել, որ այդ ամենը կապված է ղարաբաղյան հարցի հետ, սխալ ուղղություն է: Դա բացարձակ կապ չուներ ղարաբաղյան հարցի հետ, եւ նրանք, ովքեր դրդում էին Պուտինին՝ այդ որոշումներն ընդունելու, հիմա աշխատում են արդարանալ, հորինում են Ղարաբաղի հետ կապ, փոխանակ ընդունելու իրենց սխալը եւ ներողություն խնդրելու հայ ժողովրդից: Կարծում եմ, դա էապես կբարձրացներ Ռուսաստանի հեղինակությունը հայ հասարակությունում եւ թույլ չէր տա, որ Փաշինյանը մանիպուլացներ այս հարցերը:

**- Կարծիք կա, որ Փաշինյանին Մոսկվա են ուղարկել եվրոպացիները, որ նա այնտեղ արտահայտվի Եվրասիական միության դեմ, եւ Փաշինյանը դա անում է՝ ընտրություններում Եվրոպայի աջակցությունը վաստակելու համար: Կարո՞ղ էր այդպես լինել:**

- Կարծում եմ, որ ճիշտ հակառակն է տեղի ունեցել: ԵՄ-ն կարող էր նրան ուղղորդել Մոսկվա, բայց այլ նպատակով՝ Պուտինին խաբելու համար, պրոռուսական ներկայանալու, ասելու, որ մենք ՌԴ-ի հետ ենք, ամեն ինչ լավ կլինի: Այդպես արեց Սահակաշվիլին, 2004 թվականին, երբ գնաց Մոսկվա եւ հավաստիացրեց, որ՝ վերջ, մենք ընկերներ ենք, որ պատրաստ է բարեկամանալու Ռուսաստանի հետ, որ ձեր ռազմաբազաները կպահպանենք: Պուտինը նրան աջակցեց, բայց շատ արագ նա վերակողմնորոշվեց, բազաները դուրս բերեց Վրաստանից, պատերազմ սկսեց Հարավային Օսիայում, Աջարիան գրավեց՝ այդ խաբեության հաշվին, ու այս անգամ էլ Փաշինյանն է ուզում խաբել Պուտինին, բայց, ինչպես մենք տեսանք, նրա մոտ ոչինչ չստացվեց:

**- Եվ վերջում՝ Իրանի մասին: Բոլորին է հետաքրքրում, թե որքան կտեւի Իրանի դեմ պատերազմը, Ձեր կարծիքով, ի՞նչ կլինի այն 2-3 շաբաթում, որոնց մասին խոսեց Թրամփը:**

- Ոչ այնքան կարեւոր է, թե ֆորմալ որքան կտեւի պատերազմը, որքան՝ այն, թե որքան կտեւի պատերազմի ինտենսիվ փուլը: Այն կավարտվի բավականին արագ՝ Թրամփի ասած այդ 2-3 շաբաթում: Դա պայմանավորված է նրանով, որ ամերիկացիների հրթիռների պաշարները վերջանում են: Նրանք հիմնականում օգտագործում են «Տամագավկ» (Tomahawk) հրթիռները: 500 կմ հեռավորությամբ «Պրեսիշն թրաք» (Precision Strike) հրթիռներից նրանք քիչ ունեն, ի տարբերություն «տամագավկների», բայց դրանք վերջանում են: Կան նաեւ JASSM ավիացիոն բազավորման հրթիռներ, էլի 900 կմ հեռահարության, որոնք, սակայն, չեն կարող օդից հրթիռակոծել Իրանը, քանի որ Իրանը պահպանել է հակաօդային պաշտպանության միջոցները եւ արագ հարվածում է իր տարածք մտնող ինքնաթիռներին: Այնպես որ, Իրանին էֆեկտիվ հարվածներ հասցնելն ԱՄՆ-ի համար արդեն բարդ է լինելու, եւ ռազմական գործողությունների ինտենսիվությունը կնվազի: Թե ինչպես կզարգանան իրադարձությունները, չգիտեմ, բայց Թրամփը չի կարողանա ստիպել Իրանին՝ ընդունել իր պայմանները: Իրանը շարունակելու է հարվածել ԱՄՆ ռազմաբազաներին: Անգամ եթե Իրանի հրթիռները վերջանան, նա ունի անսահմանափակ անօդաչուներ եւ շարունակելու է հարվածներ հասցնել Իսրայելին եւ ԱՄՆ բազաներին, նաեւ Լիբանանում շարունակվելու են ռազմական գործողությունները: Ու դա տեւելու է բավական երկար: Նավթի գները կաճեն, Թրամփի վրա ճնշումը կավելանա, բայց թե ինչ կարող է անել Թրամփը՝ հասկանալի չէ: Ոմանք ասում են, որ նա կարող է միջուկային զենք կիրառել, բայց դա միջազգային հարաբերություններում հեղաշրջման կբերի, եւ այլ երկրներ եւս հանգիստ կկարողանան այն կիրառել:



Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan
@hraparak.am

ԿԸՀ

# ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՄՈՒՐԱՑԸ» ԿՄՆԱ ԹՈՐՈՒՄ

Իշխանական եւ մերձիշխանական շրջանակներից վերջին շրջանում հետեւողականորեն լուրեր են տարածվում, թե իբր հիմքեր կան, եւ ԿԸՀ-ն հնարավոր է չգրանցի Սամվել Կարապետյանի դաշինքը: Պահանջողներից մեկն էլ Արամ Սարգսյանն է, որն իր հարցազրույցներում պարբերաբար կրկնում է. «Այնպես, ինչպես Մոլդովայում... Ես իրավաբան չեմ, բայց իրավաբաններն ինձ մի քանի կետ են ցույց տվել, թե ինչ հիմքով: Հիմնականը դրսից ուղղորդվելու ու ֆինանսավորվելու հանգամանքն է»:

Ոմանք նման պնդման հիմքում դնում են Սամվել Կարապետյանի երկքաղաքացի լինելը: Սահմանադրության 148-րդ հոդվածը պահանջում է, որ պատգամավորի, նաեւ՝ վարչապետի պաշտոնում կարող է առաջադրվել բացառապես մեկ երկրի՝ Հայաստանի քաղաքացիություն ունեցող անձը, որը վերջին 4 տարում ապրել է Հայաստանում: Ոմանք միամտորեն կարծում են, որ Սամվել Կարապետյանն է առաջնորդելու ցուցակը, եւ ԿԸՀ-ն այդ հիմքով մերժելու է թեկնածուի, ապա նաեւ կուսակցության գրանցումը: Ոմանք էլ բոլորովին այլ վարկածներ են առաջ մղում, թե ինչպես է մերժվել ՔՊ-ի գլխավոր մրցակցի գրանցումը: ՀՀ Ընտրական օրենսգրքի մի քանի բաժին սահմանում է թեկնածուների առաջադրման, սահմանափակումների, կուսակցության կամ դաշինքների ընտրական ցուցակը գրանցելու, գրանցումը մերժելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հարցերը: Դրանք կարգավորվում են Ընտրական օրենսգրքի 81-87-րդ գլուխներով:

Սահմանադրագետ, միջազգային իրավունքի մասնագետ **Վարդան Պողոսյանը** գրեթե բացառում է, որ ԿԸՀ-ն հիմքեր գտնի որեւէ կուսակցության, դաշինքի չգրանցելու կամ գրանցումը մերժելու, ինչպես նաեւ՝ անվավեր ճանաչելու համար. «Ընտրական օրենսգիրքը երեք տեսակի կարգավորում է նախատեսում՝ գրանցման-չգրանցման հետ կապված: Մի տարբերակը գրանցումն է, ապա՝ մերժումը, բայց այստեղ իրենք բռնվելու տեղ գրեթե չունեն, որովհետեւ ներկայացված են ֆորմալ պահանջներ, որոնք պետք է առկա չլինեն ընտրացուցակում եւ ԿԸՀ-ին հիմք տան չգրանցելու համար: Եթե իրենք որոշում են ընդունում կուսակցությունը կամ դաշինքը չգրանցել այն հիմքով, որ պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել կամ թերի են, կամ՝ կեղծված, կամ էլ՝ 83-րդ հոդվածին չեն համապատասխանում, այսինքն՝ ցուցակում գրել են մարդկանց, որոնք կրկնակի քաղաքացիություն ունեն, մշտական բնակություն չունեն, դատավոր են, քննիչ, ԱԱԾ աշխատակից եւ այլն... Բայց կոնկրետ հիմքերն այնպես են շարադրված, որ ես բացառում եմ, թե կարող են չգրանցել կամ մերժել: Նկատի ունենանք, որ ԿԸՀ-ն էլ 2/3-ով պետք է այդ որոշումն ընդունի: Ինչպես նաեւ՝ Ընտրական օրենսգիրքն էլ հստակ ասում է, որ երբ թերի են փաստաթղթերը ներկայացված, պետք է մատնանշվեն թերությունները, եւ ժամանակ տան, որ թերությունները շտկվեն, ուստի հենց այս նկատառումով եմ ասում, որ գրեթե բացառում եմ, որ կարող են չգրանցել կամ մերժել»:

ԿԸՀ-ն, ըստ օրենքի, կարող է նաեւ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը ճանաչել անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են: «Եթե, օրինակ, ԸՕ-ն ասում է, որ ցուցակի առաջին 30 համարը պետք է համագումարով հաստատվեն, հետո պարզվում է, որ համագումար չեն արել կամ ինչ-որ բան համագումարին այնպես չեն արել, ինչպես նախատեսված է, ապա ԿԸՀ-ն այս դեպքում եւս 2/3-ով պետք է որոշում կայացնի: Բայց այս դեպքում էլ ես չեմ տեսնում, որ բռնվելու տեղ կա»,- նկատում է Վարդան Պողոսյանը:

ԸՕ 88-րդ հոդվածն էլ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի կամ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելուն է վերաբերում, բայց մեր զրուցակցի խոսքով, այս հոդվածով էլ քիչ հավանական է, որ կկարողանան ուժը կորցրած ճանաչել: Հիմքերը չորսն են. եթե կուսակցությունն ինքնաբացարկ է հայտնել, լուծարվել է, կամ նրա գործունեությունն արգելվել կամ կասեցվել է Սահմանադրական դատարանի որոշմամբ, ինչպես նաեւ՝ «կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների թիվը նվազել է երկուսից»: Մեր զրուցակցի դիտարկմամբ՝ միայն վերջին կետով է հնարավոր ինչ-որ քայլեր իրականացնել: ««Ուժեղ Հայաստանի» պարագայում, եթե երկու նոր կուսակցություններին համոզեն դուրս գալ պայքարից, նոր հնարավոր է, բայց չեմ կարծում, որ որեւէ կուսակցություն նման քայլի կգնա»,- ասում է Վ. Պողոսյանը: «Մնում են միայն այն դեպքերը, երբ դրանց լուծումը տրված է վարչական դատարանին՝ վարչական ակտի հիման վրա կարող են ընդդիմադիր ուժին դուրս թողնել պայքարից: Ընթացակարգը հետեւյալն է. սկզբում ԿԸՀ-ն քննարկում է եւ եթե գտնում է, որ երեք հիմքերից որեւէ մեկն առկա է, այդ ժամանակ որոշում է կայացնում առկա լինելու մասին եւ դիմում է դատարան, հիմքերից մեկը նախընտրական հիմնադրամ չբացելն է, մյուսը՝ նախընտրական հիմնադրամների միջոցների օգտագործման կարգի խախտումը, երրորդը՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը»:



Պողոսյանը կարծում է, որ եթե առաջին երկուսի դեպքում գրեթե ռիսկեր չկան, ապա երրորդի մասով հնարավոր է կամայական մոտեցում ցուցաբերել: Խոսքն ԸՕ 19-րդ հոդվածի 8-րդ կետին է վերաբերում, որը սահմանում է. «Եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, եւ թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետեւանքները հնարավոր չէ վերացնել, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից»:

Վարդան Պողոսյանը, այդուհանդերձ, հույս ունի, որ վարչական դատարանը խոհեմություն կցուցաբերի եւ նման ապօրինության չի գնա. «Հատկապես որ մինչ օրս վարչական դատարանները եղածներից ամենանորմալն են եղել՝ որոշ բացառություններով, եւ հույս ունեմ, որ վարչական դատավորները չեն գնա այդ քայլին»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

# ՀԻՄԱ ՄԵԿ ԽՆԴԻՐ ՊԵՏՔ Է ԼՈՒԾԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

Ընդդիմադիր որոշ շրջանակներ, խոսելով իրենց առաջնորդի մասին, ասում են՝ «Հայաստանի հաջորդ վարչապետ» կամ «Հայաստանի հաջորդ ղեկավար»: Ոմանք կարծում են, որ սա հակառակ էֆեկտն է տալիս, եւ վտանգավոր է նման հայտարարություններ անելը: Նման կոպիտ քարոզչությունը մարդիկ չեն ընկալում, նրանք ուզում են հանուն անվտանգ ու բարեկեցիկ Հայաստանի քվեարկել, այլ ոչ հանուն անձերի:

Քաղաքագետ **Երվանդ Բոզոյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Չի կարելի, առուն չթռած, ասել հոպ, այս հայտարարությունները մարդկանց մոտ կարող են սխալ տպավորություն ստեղծել, մարդիկ կարող են մտածել՝ դե էլ ինչի՞ համար գնանք ընտրության, արդեն պարզ է, եւ այլն: Նման հայտարարությունները կարող են վնասել ընդդիմադիր ուժերին: Կարճ ասած՝ բացասական ազդեցություն են թողնում նմանօրինակ հայտարարությունները: Այս շրջանում ընդդիմադիր ուժերը լավ կանեն՝ մարդկանց հորդորեն՝ ընտրություններին մասնակցել, պետք է կարողանալ ազատ շփվել մարդկանց հետ, անմիջական զրույցներ ունենալ, լսել նրանց խնդիրները եւ այլն: Ես կողմնակից եմ, որ ընդդիմադիր ուժերը բաց, մասշտաբային հանդիպումներ ունենան: Մենք ապրում ենք 21-րդ դարում, որքան բաց լինեն այդ հանդիպումները եւ հրապարակային, այնքան ավելի լավ ու տրամաբանական: Տրաֆարետային, փակ դահլիճներում երբեմն տեսնում ենք նման հանդիպումներ, որոնք, անկեղծ ասած, տեսել են բոլորը եւ այլեւս չունեն որեւէ ազդեցություն: Երբ գնում ես մի տեղ, հավաքում ես քո կողմնակիցներին եւ ուղղակի ինչ-որ ելույթներ ես ունենում, դա որեւէ օգուտ չի կարող տալ: Բայց երբ անմիջական ես, ազատ կարողանում ես շփվել մարդկանց հետ, լսել նրանց խնդիրների մասին եւ այլն, դա շատ ավելի ընկալելի է դառնում հասարակության համար: Այնուամենայնիվ, լինել անմիջական՝ չի նշանակում Նիկոլ Փաշինյանի նման չափերն անցնել: Ամեն ինչ գեղեցիկ է չափի մեջ: Երբ դու գնում ես՝ զոռով եկեղեցի ես ներխուժում, բոլորին իրար ես խառնում, մարդկանց հրում ես, խանգարում ես սուրբ պատարագի արարողությունը, ներողություն, բայց դա գռեհկություն է, ոչ թե անմիջականություն: Երբ ես ասում եմ, որ անմիջականությունը լավ բան է, դա չի նշանակում, որ Նիկոլ Փաշինյանի տգեղ ու գռեհիկ պահվածքը հաճելի է, բնավ: Այն միմիայն տհաճություն է առաջացնում մարդկանց մոտ, կամ էլ՝ մետրոյում երեխայի ներկայությամբ մորը վիրավորեց ու սադրեց, ո՞ւմ այդ միջադեպը դուր եկավ, վստահաբար՝ ոչ մի բանական ու գրագետ մարդու»:





Քաղաքագետ **Սուրեն Սուրենյանցն** էլ, խոսելով ընդդիմության հայտարարությունների, մասնավորապես այն մասին, որ որոշ ուժեր արդեն իսկ իրենց առաջնորդներին անվանում են ՀՀ հաջորդ վարչապետ, ասում է. «Ես նման ձեւակերպումներից աշխատում եմ շատ զգույշ մնալ: Ամեն բան անում եմ իմ թիմի հաղթանակի համար, բայց նման կանխորոշ հայտարարություններից աշխատում եմ հեռու մնալ, որովհետեւ այդպիսի հայտարարությունները վտանգավոր են: Այսօր բոլոր ընդդիմադիր ուժերի թիվ մեկ խնդիրը պետք է լինի հաղթանակը: Պետք չէ խոսել այս փուլում նման կարգախոսներով, քանի որ նախ դրանք կարող են հասարակության մոտ հանգստություն առաջացնել, եւ մարդիկ ուղղակի որոշեն չգնալ ընտրությունների: Ինչպես նաեւ՝ կա մեկ այլ վտանգ. եթե ընդդիմությունը հաղթի, վարչապետի թեկնածուի հարցը կարող է դառնալ կոմպրոմիսների թեմա: Նման հայտարարությունները կաշկանդում են ընդդիմությանը, ինչու, որովհետեւ վաղը կարող ենք ունենալ կոմպրոմիսների գնալու անհրաժեշտություն: Ամեն դեպքում այնպես էլ չէ, որ խիստ դատապարտում եմ նման հայտարարություններ անողներին, սակայն ես՝ ինքս, նման մոտեցման կողմնակից չեմ, կարծում եմ, որ առնվազն այս փուլում դա սխալ մոտեցում է: Ավելի ճիշտ կլինի՝ ընտրողներին հասցեագրել այնպիսի մեսիջներ, որոնք ընտրական գործընթացների մասնակցությունը կարող են բարձրացնել, այլ ոչ թե՝ հակառակը»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ

# ԻՐԵՆՔ ՈՒԶՈՒՄ ԵՆ ՄԻ ՍԱԿՐԱԼ ՎԱՅՐՈՒՄ՝ ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՅԻ ԱՐՅՈՒՆ ԹԱՓԵԼ



Մինչ Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած հայտնի միջադեպից ցնցված հանրությունը մեծահոգություն է սպասում վարչապետ Նիկոլ Փաշինյանից, վերջինս արդարացնում է դպրոցականներ ծեծող սափրագլուխ «ախրաննիկին», ինչպես ժամանակին արդարացրել էր իր մեկ այլ թիկնապահիո՝ հղի կնոջը վրաերթի ենթարկածին:

Ասում է. բա ի՞նչ պետք է աներ, պետք է հրավիրեր սրճարան՝ սուրճ խմելո՞ւ: Ասում է՝ իր «վեջը չի», թե 18 տարեկան է, առողջական խնդիր ունի, «ես չեմ հանդուրժի, որ ՀՀ որեւէ ծառայություն իրա պարտքը չկատարի», եւ հոխորտում է կատարվածը Պալլավոկի հայտնի դեպքի հետ համեմատող լրագրողի վրա, թե՝ «բարեւ, Ռոբ» ասելու համար տարել էին զուգարան, սպանել էին, տարբերությունը չե՞ք տեսնում:

Իսկ Դուք այս երկու դրվագների միջեւ տարբերություն տեսնո՞ւմ եք՝ հարցնում ենք իրավապաշտպան, «Լրագրողներ՝ հանուն մարդու իրավունքների» կազմակերպության ղեկավար **Ժաննա Ալեքսանյանին**: «Հիշեցնեմ, որ նրա՝ իշխանության գալուց հետո Պոպլավոկի դեպքը չի բացահայտվել, եթե Փաշինյանը համեմատություններ է անում, մենք էլ կարող ենք հարցնել՝ ինչո՞ւ չի բացահայտվել: Ինչ վերաբերում է Սուրբ Աննա եկեղեցու միջադեպին, գտնում եմ, որ Նիկոլ Փաշինյանը պարտավոր էր ներողամտություն դրսեւորել եւ ներողություն խնդրել այդ ընտանիքից»:

Նիկոլ Փաշինյանը չի ասել, թե արդյոք վտանգ զգացե՞լ է միջադեպի ժամանակ: «Թող դա ասեր, թե փաստացի ինչ է տեղի ունեցել իր հետ: Այդ եկեղեցում, իրենից բացի, մնացած բոլորն անպաշտպան էին: Ու դեռ համեմատում է Պոպլավոկի միջադեպի հետ: Այսինքն՝ միայն այդ համեմատության մեջ է երեւում, թե որքան է ինքը կատարյալ»: Ըստ իրավապաշտպանի, մինչ օրս պարզաբանված չէ, թե ինչ իրավիճակ է ստեղծվել եկեղեցում, արդյո՞ք այդ երիտասարդը մտադրություն է ունեցել՝ հարձակվելու Փաշինյանի վրա: «Դա պետք է ասեր Նիկոլ Փաշինյանը: Այդ տղայի կալանավորման հարցն ամբողջությամբ կախված է իրենից: Եթե հարձակումն իր հետ էր կապված, թող ասեր, թե ինչ է եղել, արդյոք ինքը զգացե՞լ է վտանգ, թող խոսեր այդ տղայի հետ: Երկրորդ. ինչո՞ւ է ինքն իր զորքով գնացել այդ խաղաղ միջավայրը, որտեղ մարդիկ աղոթք են անում: Նրա պարտականությունն էր՝ հարգել այդ ժողովրդին, ոչ թե բոլորին անհանգստություն պատճառել»: Արդեն երկրորդ անգամ է Փաշինյանը պաշտպանում իր «ախրաննիկների» ոչ իրավաչափ պահվածքը: Առաջինը հղի կնոջն ավտովթարի ենթարկելուց հետո էր: Սրա պատճառը, ըստ Ժաննա Ալեքսանյանի, այն է, որ «առաջին տեղում Փաշինյանի համար ինքն է, երկրորդը՝ ախրաննիկը»:

«Երբ պետական պահպանության ծառայության ծառայողը տեսնում է, որ իր պահպանյալին վտանգ է սպառնում, ինքը կարող է հարվածել, կարող է ուժ գործադրել, Աստված չանի՝ սուր իրավիճակներում կարող է զենք գործադրել»,- լրագրողներին անվտանգության աշխատողների գործունեության կանոնակարգերն է բացատրում վարչապետը, որոնք առաջինը ինքը չի հարգում, հակառակ դեպքում չէր մտնի մի տարածք, որտեղ մարդիկ կարող են եւ սուր դժգոհություն արտահայտել:

«Բա անվտանգությունն ինչի՞ համար էր՝ գնահատելո՞ւ, կանխատեսելո՞ւ, թե՞ սադրելու»,- իրավապաշտպան, «Նժար» սահմանադրական շարժման հիմնադիր **Նինա Կարապետյանցի** կարծիքն է: Նա կարծում է, որ անվտանգային կանոնների վրա հղումներ անելը տրամաբանական չէ: «Երկու տարբեր իրականություն կա՝ եթե Փաշինյանը մասնակցում է ինչ-որ համաժողովի կամ նույն այդ՝ «Կրթվելը նորաձեւ է» հավաքներին, մարդկանց մինչեւ անդրավարտիքը հանում են, հեռախոսները խլում են, ստուգում են պայուսակները, մետաղորսիչներով են անցկացնում, իսկ այստեղ բերել էին մի միջավայր, որտեղ մարդիկ ուրախ չեն նրան տեսնելու համար: Ինչո՞ւ էր գնացել այնտեղ: Նույնն էլ՝ նրա կինը, որ երեխային վերցրել, գնացել էր Ծիծեռնակաբերդ: Իմ կարծիքով, իրենք դիտավորյալ ուզում են այնպես անել, որ մի սակրալ վայրում, սրբավայրում հայի արյուն թափեն, որ հետո ադրբեջանցիները գան, ինչ-որ միջադեպեր լինեն այդ 300 հազար ադրբեջանցիների հետ, նրանք ասեն՝ դուք եք ձեր սակրալ վայրերում իրար արյուն թափում, մեզնից ի՞նչ եք ուզում: Նա այսպիսի բախումների է գնում միայն հայերի սրբավայրերում՝ Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր, եկեղեցի: Մնացած վայրերում մարդկանց կանոնավոր խուզարկում են»:

Փաշինյանից չի կարելի ներողամտություն սպասել, ադեկվատ մարդուց են սպասում, իսկ այդ մարդը չունի կարմիր գծեր:

Այս միջադեպը լակմուսի թղթի դեր խաղաց հայաստանյան իրավապաշտպանների համար: Անմիջապես ուրվագծվեց, թե ով ով է, ով որքանով է անկախ եւ որքանով է իշխանության հետ համերաշխ: Օրինակ, «Ասպարեզ» մամուլի ակումբի ղեկավար Լեւոն Բարսեղյանը Փաշինյանից էլ հեռու է գնացել. ուրախ պետք է լինենք, որ թիկնապահն ընդամենը հարվածել է, կարող էր նաեւ կրակել: «Կարող եք չհավատալ, որ գեշ փորձանքից է պրծել Հայաստանը, երբ եկեղեցում երիտասարդի ձեռը նպատակին չի հասել: Զենք կրող թիկնապահներ կային... Ոչ ոք չգիտի, թե հաջորդ նման դեպքում ինչ կլինի»,- իբրեւ թե կատակում է նա:

Դանիել Իոաննիսյանը հոգեկան հիվանդ է անվանել երիտասարդին, ինչով հրահրել է հանրության դժգոհությունը: «Բայց վարչապետին հարվածել փորձած երիտասարդը պարզապես հիվանդություն ունեցող անձ է, պետք չէ կալանավորելով իր կյանքը խորտակել: Կալանավորումը կարող է էապես ազդել իր հոգեկան առողջության վրա»,- գրել է նա՝ հրահրելով նոր դժգոհություն: Երբեմնի ակտիվ իրավապաշտպան Արթուր Սաքունցն ընդհանրապես շրջանցել է թեման: Նրա ֆեյսբուքյան էջում գրեթե ամենօրյա գրաֆիկով ռուսական սապոգի մասին գրառումներ են: Դե, իսկ ի պաշտոնե «գլխավոր» իրավապաշտպան, ՄԻՊ Անահիտ Մանասյանը ոչ մի դատապարտող հայտարարություն՝ վարչապետի կամ նրա թիկնապահների անվան հիշատակումով, այդպես էլ չարեց: Սուրբ Աննայի միջադեպի հաջորդ օրը նա Ժնեւում էր, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի ասամբլեայի մասնակիցներին պատմում էր արդի մարտահրավերների մասին: Նա այդպես էլ «լայաղ չարեց» անձամբ այցելել բանտարկված դպրոցականին: Իսկ երեկ, մինչ կալանավորված դպրոցականի աջակիցները «Ազատեք Դավիթին» պաստառներով ՄԱԿ-ի գրասենյակի դիմաց էին, Անահիտ Մանասյանի աշխատողները գնացել էին «Արմավիր» ՔԿՀ, տեսնելու, թե արդյոք չե՞ն խախտվում բուժում ու կրթություն ստանալու նրա իրավունքները: «Կալանքի ինստիտուտի չարաշահումը... կարող է լրջորեն վնասել քրեական արդարադատության ամբողջ շղթայի նկատմամբ վստահությունը եւ առաջացնել այլ համակարգային խնդիրներ»,- վախվորած հայտարարել է ՄԻՊ-ը՝ առանց անուն տալու, առանց նշելու, թե ով է չարաշահել կալանքը, ում նկատմամբ, եւ ինչու է ինքը հանկարծ խոսում կալանքի իրավաչափությունից: Իսկ մի նիկոլաֆեյք, փորձելով օբյեկտիվ ՄԻՊ-ի իմիջ ստեղծել, գրել է նրա հայտարարության տակ. «Տիկին ՄԻՊ, վարչապետի նկատմամբ ոտնձգության վերաբերյալ ձկան համառությամբ լռեցիք»:



Սյուզան
ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan
@hraparak.am

# ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆԱՅՈՒՄ ԵՆ ՄԱՏՆԵՐԻ ԱՐԱՆՔՈՎ



Պատերազմի ժամանակ Անգլիայի վարչապետ Չերչիլի հաստատմանն են ներկայացնում պետության բյուջեն: Թերթելով փաստաթուղթը՝ նա հարցնում է.

- Իսկ որտե՞ղ են մշակույթի համար նախատեսված ծախսերը:

- Բայց հիմա պատերազմ է, ի՞նչ մշակույթ:

- Եթե մշակույթը չկա, այդ դեպքում ինչի՞ համար ենք մենք պատերազմում,- զարմացած ասում է Չեչիլը:

Հինավուրց, հարուստ մշակույթ ունեցող Հայաստանում չկա մշակույթի նախարարություն, մշակույթի բնագավառը համատեղությամբ կառավարում է կրթության, գիտության, սպորտի բնագավառները համակարգող նախարարությունը: Մշակութային իրադարձությունների մեծ մասը տեղի է ունենում Երեւանում, մարզերում մշակութային կյանքը համեստ է: Մարզերի համայնքապետարաններում գործում են կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի բաժիններ: Մարզպետարաններում առկա են կրթության, մշակույթի եւ սպորտի վարչություններ: 66 աշխատակից եւ 10 թափուր հաստիք ունեցող Տավուշի մարզպետի աշխատակազմում միայն մի պաշտոնյա է զբաղվում մշակույթով, նա էլ մշակութային կրթություն չունի, արվեստի որեւէ բնագավառում հայտնի ստեղծագործող չէ. Մարինե Խաչատրյանը մասնագիտությամբ ֆիզիկոս է, ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: Նա գրեթե 20 տարի որպես մշակույթի ոլորտի մասնագետ աշխատում է Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությունում, 2007-ին մրցույթով է ընտրվել այդ պաշտոնում: Ընտրվել է մրցույթով, սակայն՝ առանց մրցակցի:

Տավուշի մարզպետարանից նախկինում այդ մասին մեզ հայտնել են. «Տավուշի մարզպետարանի մշակույթի ոլորտի պատասխանատուն մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության առաջատար մասնագետ Մարինե Խաչատրյանն է, որը մրցութային կարգով այդ պաշտոնն զբաղեցնում է 2007 թ. փետրվարի 19-ից՝ աշխատակազմի ղեկավարի թիվ 49-Ա հրամանով: Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական բարձրագույն կրթությունը եւ արվեստի որեւէ բնագավառում ստեղծագործելը պարտադիր պայման չեն, բավական է միայն բարձրագույն կրթության եւ համապատասխան աշխատանքային ստաժի առկայությունը, ինչպես նաեւ՝ անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն՝ տվյալ պաշտոնի անձնագրին համապատասխան: Մարինե Խաչատրյանն իր գործառույթները կատարում է բարեխղճորեն ու պատշաճ մակարդակով, աշխատանքային գործունեության ընթացքում արժանացել է պատվոգրերի եւ շնորհակալագրերի ՀՀ մշակույթի, ՀՀ պաշտպանության նախարարների, այլ կազմակերպությունների կողմից»:

Մարզպետարանից տեղեկացել եմ, որ 2024 թվականին պետբյուջեի միջոցներով «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը կազմակերպել է «Պարատոն» միջհամայնքային մշակութային փառատոն, Իջեւանի «Ավանդույթ» երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ը՝ «Վարդավառ» զանգվածային միջոցառումը, «Կողբի գեղարվեստի դպրոց» ՀԿ-ն՝ երիտասարդ նկարիչների ցուցահանդես-փառատոն, «Բերդի մշակույթի կենտրոն» ՄՀԿ-ն՝ միջհամայնքային մշակութային փառատոն: «4 քույրերից յուրաքանչյուրին՝ մի ականջօղ», մարզի 4 խոշոր համայնքներում՝ Նոյեմբերյանում, Իջեւանում, Բերդում, Դիլիջանում, պետբյուջեի միջոցներով մշակութային մեկական միջոցառում է կազմակերպվել, մարզի համայնքների յուրատեսակ մշակութային համահարթեցում է արվել: 2025 եւ 2026 թվականներին մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար Տավուշի մարզպետի աշխատակազմին պետբյուջեից գումարներ չեն տրամադրվել:

Ոսկան
ՍԱՐԳՍՅԱՆ

## Հարց «Ուժեղ Հայաստանի» առաջնորդներին

Նիկոլ Փաշինյանի ամենշաբաթյա ճեպազրույցները դրվագներով հիշեցնում են նախավարժանք, որտեղ նա նախապատրաստվում է իշխանությունը կորցնելու դեպքում իր նկատմամբ հարուցված քրգործի դատավարությանը, արձանագրում է հնարավոր մեղադրանքները եւ մշակում իր պատասխանները: Նաեւ ուրվագծում են այն քայլերն ու գործողությունները, որոնք նա իրականացնելու է վերընտրվելու դեպքում:

Իհարկե, այստեղ գուցե անտեսանելիորեն ակնհայտ է, որ այդ դեպքում նա կատարելու է Ադրբեջանի բոլոր պահանջները՝ ներառյալ սահմանադրության փոփոխությունը եւ 300 հազար ադրբեջանցիների վերադարձը Հայաստան: Եվ սրանք լինելու են նրա հիմնական հեռահար քայլերը նոր պաշտոնավարման ընթացքում: Բայց նաեւ ուրվագծվում են (գուցե դարձյալ անտեսանելիորեն ակնհայտ) քայլեր, որոնց կապակցությամբ հարց է ծագում՝ ուղղված «Ուժեղ Հայաստանի» առաջնորդներին: Գիտակցո՞ւմ են նրանք, որ ընտրություններում Նիկոլ Փաշինյանի հաղթանակի դեպքում իրենք հայտնվելու են բանտում եւ այնտեղ մնալու են այնքան, քանի դեռ Նիկոլ Փաշինյանն իշխանության է: Ըստ Փաշինյանի տրամաբանության՝ քանի դեռ ինքը կենդանի է:

**Հակոբ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ՍԵՐԻԱԼ

# ԱԳՐԵՍԻՎ, ՔՐԵԱԾԻՆ ԽՈՍՔԸ՝ ՄԱՆՐՈ՞ՒՔ, ԹԵ՞ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎՏԱՆԳ

Մանրուքներից է գոյանում աղբը: Բայց երբ այդ «աղբը» տարիներով էկրաններից լցվում է մեր գլխին, դադարում է մանրուք լինելուց՝ դառնում է միջավայր, որը ձեւավորում է մարդուն: Այսօր մեզ փորձում են համոզել, թե հայկական սերիալների գռեհիկ լեզուն, դրանցում տիրող ագրեսիան, քրեական մտածողության փառաբանումը երկրորդական խնդիրներ են՝ մանրուքներ: Թե իբր՝ կան ավելի լուրջ հարցեր: Այո՛, կան, բայց սա էլ անկարեւոր չէ՝ ամենանենգերից է, որովհետեւ գործում է աննկատ: Խոսքը պարզապես խոսք չէ: Խոսքը մտածողություն է, վարք է: Եվ այն, ինչ այսօր հնչում է էկրանից, վաղը լսում ես տանը, փողոցում:

Դիտեք ցանկացած սերիալ եւ կտեսնեք նմանօրինակ պատկերներ: Բացահայտ քրեական անցյալ ունեցող մեկը ներկայացվում է որպես «հեղինակություն»: Նրա խոսքը կոպիտ է, վիրավորական, սպառնալիքներով լի, բայց՝ «հարգված»: Ասես ուղերձ են հղում հանրությանը՝ հարգանքը վաստակում են ոչ թե արժանիքով, այլ՝ վախ ներշնչելով, գռեհիկ խոսքով, անօրեն պահվածքով: Մեկ այլ ուղերձ՝ տղամարդն իր սիրո օբյեկտին վերաբերվում է որպես սեփականություն՝ կոպտում է, ստորացնում, հրահանգներ տալիս: Հետո զարմանում ենք, որ առօրյա կյանքում տեսնում ենք՝ ինչպես են հարաբերվում մայրն ու որդին, ամուսինները: Սա իրական կյանքը չէ, այլ կյանքի խեղաթյուրում է:

Հումորային հաղորդումներ դիտենք՝ ծիծաղը կառուցվում է նվաստացման վրա, մեկին դարձնում են «թիրախ», եւ ամբողջ սրահը լիաթոք ծիծաղում է: Կինոն կոլեկտիվ կոպտություն ու արհամարհանք է քարոզում: Իսկ ամենավտանգավորը բառապաշարն է: Լեզվի աղքատացումը մտքի աղքատության ապացույցն է: «Էսի», «էտի», «էնի», «դավայ», «այ դուռակ» եւ այլ թերատ խոսքեր, աղավաղված նախադասություններ, եւ դա՝ ոչ թե կերպարային առանձնահատկությունից բխող, այլ՝ համակարգային մոտեցմամբ: Հերոսը չի կարողանում միտք ձեւակերպել, չի կարողանում հանգիստ խոսել՝ գոռում է, չի կարողանում բացատրել՝ վիրավորում է: Բառապաշարն աղքատ է, բռնությունը սկսում է խոսել խոսքի փոխարեն:

Եվ սերիալային պարադոքսներ, հակասություններ, անհամոզիչ սյուժե՝ անբարոյական մարդը խոսում է «պատվից», հանցագործը պահանջում է «հարգանք», կոպիտը ներկայացվում է որպես «ուղղամիտ», լկտիությունը՝ որպես «ազատամտություն»: Իսկ ո՞ւմ պարզ չէ, որ հեռուստատեսությունն առաքելություն ունի՝ կրթել, դաստիարակել, բարձրացնել, մթնոլորտ ձեւավորել: Իսկ այն իջնում է ամենացածր մակարդակին եւ արդարանում՝ «ժողովուրդը սա է ուզում»: Սա ոչ թե սոսկ կեղծիք է, այլ՝ վտանգավոր կեղծիք: Մեր ժողովուրդն ուզում է այն, ինչ իրեն տարիներով մատուցվել է: Եթե նրան մշտապես կերակրում ես պարզունակությամբ ու գռեհկաբանությամբ, նա սկսում է դա ընդունել որպես բնական մի բան:



Եվ որտե՞ղ են պետությունը, կարգավորող մարմինները: Տարիներ շարունակ խոսվում է չափորոշիչների, վերահսկողության, բովանդակության որակի մասին: Իսկ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը միայն ընդդիմադիր թիվիներին ճնշելու գործիք է դարձել եւ սերիալների նկատմամբ ոչ մի հսկողություն չի իրականացնում: Եվ ստացվում է, որ ոչ ոք չի հսկում սերիալների եւ հեռուստակոնտենտի որակի նկատմամբ:

Մի քանի օրինակ բերեմ սերիալային «գոհարներից». «Կյանքը սենց ա, ով ուժեղ ա՝ նա ա տիրում», «Սաղ կյանքը փող ա, մնացածը ֆալշ ա», «Ես քեզ ցույց կտամ՝ ով եմ ես»: Սերիալային մտածողությունը սեղմվում է երեք գաղափարի մեջ՝ ուժ, փող, գերիշխանություն: Իսկ գռեհկաբանությունները խոսում են ոչ միայն լեզվի քայքայման մասին, այլեւ՝ արժեքների: Լեզուն միայն մտածողության հայելին չէ, այլ նաեւ՝ «ճարտարապետը»: Սերիալներն ու մեդիան ձեւավորում են «նորմալության» պատրանք: Երբ գռեհիկը դառնում է սովորական, բարեկիրթը սկսում է թվալ «արհեստական»: Մշակույթը կա՛մ բարձրացնում է մարդուն, կա՛մ սովորեցնում, որ ցածր լինելն է բնական: Եվ այստեղ ծագում է սոցիալական վտանգը՝ երեխաները կրկնօրինակում են սերիալային լեզուն, որն աղտոտում է միջավայրը: Ինչպես օդը, լեզուն էլ կարող է լինել թունավոր:

Եվ մենք ստանում ենք սերունդ, որի համար կոպտությունը դառնում է բնական, գոռոցը՝ ընդունելի, գռեհկությունը՝ սովորական: Եվ այդ սերունդը նույն լեզվով է կառուցում իր հարաբերությունները, իր ընտանիքը, իր հասարակությունը: Այս ամենը մանրո՞ւ ք է, թե՞ պետական կարեւորության խնդիր: Հեռուստաեթերը չի կարող լինել անպատասխանատու տարածք: Այն պետք է բարձրացնի մարդուն, այլ ոչ թե իջեցնի: Իսկ լեզվական վարակներն ամենավտանգավորն են. դրանք չեն երեւում, բայց քայքայում են ամեն ինչ եւ ձեւափոխում ամբողջ հասարակությունը:

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

# ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

«Հանրապետություն» կուսակցության նախընտրական շտաբ-գրասենյակներից մեկի վրա (Լեո-Պարոնյան խաչմերուկից մի քիչ վերեւ) փակցված է կուսակցության առաջնորդ եւ վարչապետի թեկնածու Արամ Սարգսյանի մեծադիր նկարը: Նկարում Արամ Զավենիչը ժպտում է… Մինչդեռ նկարի տակ խոշոր տառերով գրված է՝ «Տրվում է վարձով»: Երեւանի քաղաքապետարանի էն հզոր կնոջը մի հատ հարցրեք՝ էս չի՞ ձեր պահած վարչապետի թեկնածուն…

Ես չէի անդրադառնա այս աննշան իրողությանը, եթե առաջիկա ընտրություններում Նիկոլ Փաշինյանի թիվ 1 աջակիցն Արամ Զավենի Սարգսյանը չլիներ: Շատ էլ գյուղացի տղա է, քաղաքի նրբություններից չի հասկանում, պիտի այսպե՞ս վարվեն հետը: Լեւոն Տեր-Պետրոսյանը, է՛, երբ է ասել՝ Դավալուից ցախավելը հեծած՝ կգան Ազատության հրապարակ, հետո միասին կքայլեն Բաղրամյան ու իշխանությունը կվերցնեն… Եվ ՔՊ-ն, որ իր «հաջողությունների» համար մեծապես պարտական է «Հանրապետություն» կուսակցությանը, այսպե՞ս է վերաբերվում Արամ Զավենիչին, ի՞նչ է նշանակում՝ նրա նկարի տակ գրես՝ «Տրվում է վարձով»:

Արամ Զավենիչը, սակայն, բավականին գոհ է Փաշինյանի վերջին մոսկովյան այցից: Ինքը բարձրաձայն չի արտահայտվում այդ մասին, բայց ես հո զգո՞ւմ եմ, որ գոհ է: Հակառակ պարագայում հիմա Պուտինին, շատ ներողություն, պատերով կտար, կծեփեր պատերին, կփռեր ասֆալտին… Էդ ո՞ւմ ես վախեցնում ռուսամետ ուժերով, էդ ո՞ւմ ես սպառնում գազը թանկացնել, էդ ինչո՞ւ եք պարոն Թրամփին այդպես հպանցիկ անդրադառնում… Եթե այսպիսի հայտարարություններ չի անում Արամ Զավենիչը, ուրեմն գոհ է Պուտին-Փաշինյան հանդիպման «բաց մասի» արդյունքներից: Իսկ ինչ վերաբերում է նույն զույգի հանդիպման փակ մասին, ապա դրանից գոհ ենք թե՛ ես, թե՛ Արամ Զավենիչը, որովհետեւ թե՛ նա, թե՛ ես ոչինչ չգիտենք այդ մասին: Նիկոլը պիտի մեզ պատմեր՝ Պուտինի հետ ինչ են խոսել փակ դռների հետեւում, բայց Նիկոլն էլ բան չի ասում, որ բան հասկանանք: Օվերչուկն էր միայն ընդարձակ հարցազրույց տվել իրական Հայաստանի թշվառ վիճակի մասին եւ ասել, որ Հայաստանի ամենանեղ տեղով են Ադրբեջանն ու Թուրքիան կապվում իրար, ինչը չի կարող չանհանգստացնել 1828թ. Թուրքմենչայի պայմանագրի կողմերին՝ Ռուսաստանին եւ Իրանին: Պուտինը, արդյոք, այս մասին ասե՞լ է Փաշինյանին, թե՞ փակ դռների հետեւում շարունակել է «քարկտիկ» խաղալ նրա հետ, թե ով ճանաչեց Արցախն Ադրբեջանի կազմում: Իմ եւ Արամ Զավենիչի ունեցած միակ տեղեկությունն այն է, որ Պուտինն ու Փաշինյանը փակ դռների հետեւից դուրս են եկել «լայն» ժպիտներով՝ իբր «ամեն ինչ OK է»: Դրանից հետո, սակայն, Նիկոլն Արոյին ու Միհրին անգամ ոչինչ չի ասել… Մի կերպ հասել է կառավարության նիստին, շունչը տեղը բերել ու ներկայացել բրիֆինգին: Ինչո՞ւ էր Փաշինյանն այդքան այլայլված լրագրողների ներկայությունից ու հարցերից, այդ պահի նրա հոգեվիճակը կապ չունե՞ր «փակ դռների» հետեւում տեղի ունեցած քննարկման հետ: Փաշինյանին ես հաճախ եմ տեսել այլայլված վիճակում, բայց ոչ այդ աստիճանի: Ինչո՞ւ Մոսկվայից վերադառնալուն պես Ախ նիստ չհրավիրեց, ինչո՞ւ ՔՊ-ին չհավաքեց գլխին, ինչո՞ւ համապատասխան դիրեկտիվներ չտվեց՝ ինչ խոսել Մոսկվայի այցի մասին: Ուրիշ ժամանակ իր ՖԲ էջում կգրեր՝ այսինչ երկիր շատ հաջող այց ունեցա, նկարներ կտեղադրեր՝ «թռանք Երեւանից», «Իջանք Մոսկվա»… Դու զբաղված էիր՝ խոսնակդ թող աներ… Գործի անունն ի՞նչ է՝ լրագրողներին կարգի հրավիրե՞լը:



Մոսկովյան այցի ժամանակ Նիկոլին մատուցված անակնկալների եւ նրան պատճառված անհարմարությունների մասին շատ չեմ ծավալվի: Այդ կադրերը թե՛ ես եմ տեսել, թե՛ Արամ Զավենիչը եւ թե՛ աշխարհի մնացած հայերը: Ասեմ միայն, որ հայերը պատմության մեջ առաջին անգամ, այն էլ՝ Հայաստանի Հանրապետության դեսպանատան մոտ, այրեցին ՀՀ վարչապետի նկարը: Ի՞նչ ուզեցան ասել հայերը: Արդյոք այդ քայլով նրանք հանրագումարի չբերեցի՞ն ՀՀ գործող վարչապետի կառավարման 8 տարիների ողջ «հմայքն ու թշվառությունը»:

Այսքանից հետո էլ դեռ Արամ Զավենիչը ժպտում է իր մեծադիր նկարից… Դե հո իր՝ Նիկոլ Փաշինյանի թիվ 1 սարատնիկի նկարը չեն այրել… Իր նկարի տակ ընդամենը խոշոր տառերով գրել են. «Տրվում է վարձով»:

**Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**
edik.andreasyan
@hraparak.am

# ՎԵՐՋԻՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ



Ռուսաստանը մտադիր չէ այլեւս դիվանագիտորեն ձեւացնել, թե Հայաստանի հետ հարաբերություններում ամեն ինչ սովորականի նման լավ է՝ ռուսական ՏԱՍՍ լրատվական գործակալությանը տված հարցազրույցում ասել է ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը: Օվերչուկը պետության ղեկավար չէ եւ ոչ էլ քաղաքական գործիչ, նա չի կարող կտրուկ հայտարարություններ իրեն թույլ տալ, նա տնտեսության մարդ է, բայց նույնիսկ դիվանագիտության եւ տնտեսության լեզվով նա մի քանի հիշեցում կամ զգուշացում է արել Հայաստանին, որոնք ուղղված են ոչ միայն իշխանությանը, այլեւ՝ հասարակությանը: Իշխանությունների հետ կապված ամեն ինչ պարզ է. նրանք խոսում են հայ-ռուսական հարաբերությունների բարելավման մասին, բայց անում են ճիշտ հակառակը՝ Հայաստանը դարձնում Ռուսաստանի դեմ թշնամաբար գործող երկիր, բայց հասարակությունը կարող է փոխել այդ իշխանությանը, եթե համաձայն չէ նրա կողմից վարվող քաղաքականությանը: Դրա համար է այս զգուշացումն արվում Հայաստանում սպասվող խորհրդարանական ընտրություններից ընդամենը 2 ամիս առաջ: Օվերչուկն ընտրության առաջ կանգնած հայ հասարակությանը զգուշացնում է՝ դուք որոշեք, որովհետեւ ձեր ընտրության հետեւանքը զգալու եք դուք՝ ձեր կյանքի՝ բիզնեսի, եկամուտների եւ բարեկեցության մակարդակի վրա: Ինչի՞ մասին է զգուշացնում Օվերչուկը:

Խոսելով Մեղրիով անցնող ճանապարհի մասին՝ նա մանրամասն բացատրում է, որ Ռուսաստանն այդ երթուղու ապաշրջափակման համար իրենց միջնորդությունն էր առաջարկել, սակայն Հայաստանն ընտրեց ամերիկյանը, որը եթե անգամ գործի էլ, Հայաստանին որեւէ տնտեսական շահ չի ապահովելու: «Կարեւոր է հասկանալ, որ Հայաստանի ապաշրջափակումը, Ադրբեջանի 2 մասերի միջեւ հարմարավետ տրանսպորտային կապերի բացումը եւ Մեղրիի հատվածի վերականգնումը կարեւոր են ամբողջ Հարավային Կովկասի խաղաղ զարգացման համար: Առանց այս ճանապարհի, այնտեղ խաղաղություն չի լինի, բայց այն կարող է կառուցվել միայն տարածաշրջանի բոլոր երկրների շահերը հավասարակշռելով, եւ միայն Ռուսաստանի ներկայությունը կարող է ապահովել դա»: Միայն Ռուսաստանի ներկայության մասին հիշատակելը նշանակում է, որ Ռուսաստանն ամեն կերպ խոչընդոտելու է, որ այլ երկրների միջնորդությունը չաշխատի: Խոսքը ոչ միայն ինչ-որ ռեպրեսիվ մեթոդներով խոչընդոտելու մասին է, այլեւ այդ երթուղին տնտեսապես ոչ արդյունավետ դարձնելու: «Իրանում Թրամփի երթուղուն զուգահեռ ժամանակակից մայրուղու կառուցումը մոտենում է ավարտին: Ավելին, քննարկվում է երկաթուղու կառուցում, որը կանցնի Ադրբեջանից Նախիջեւան՝ Իրանի տարածքով, Մեղրիի հատվածին զուգահեռ: Ի դեպ, միջազգային փորձագետների կարծիքով, ավելի հավանական է, որ չինական եւ ռուսական բեռները կանցնեն Իրանով, քան ԱՄՆ-ի կողմից վերահսկվող հայկական տարածքով, ինչը նշանակում է, որ բեռների հոսքի մեծ մասը, նույնիսկ այդ 42 կիլոմետրի համար, հավանաբար, ընդհանրապես չի մտնի Հայաստան»: Օվերչուկի ասածն այն է, որ Ռուսաստանն իր բեռները տեղափոխելու համար կնախընտրի Իրանի տարածքով անցնող ճանապարհը, բայց ոչ Հայաստանի տարածքով անցնողը, նույնը՝ Չինաստանը, որն Իրանին է համարում դաշնակից երկիր եւ ոչ թե ԱՄՆ-ին:

Օվերչուկը զգուշացնում է, որ եթե Հայաստանը խզի «Ռուսական երկաթուղիների» հետ կոնցեսիոն պայմանագիրը եւ հայկական երկաթուղին կառավարման տա այլ երկրի, չի կարողանա օգտվել ռուսական երկաթուղուց: «Կոնցեսիոն պայմանագրի վաճառքի առաջարկվող արդյունքում հայկական երկաթուղին ոչ միայն կկորցնի ռուսական բեռները, այլեւ, ամենայն հավանականությամբ, «Ռուսական երկաթուղիների» հետ փոխգործակցությունը»: Սա նշանակում է, որ եթե հիմա Հայաստանը Ռուսաստանից՝ Ադրբեջանի եւ Վրաստանի երկաթուղին օգտագործելով, ստանում է ռուսական ցորեն, վառելիք, պարարտանյութեր եւ այլ ապրանքներ, ապա դրանից հետո դա այլեւս անհնար կլինի:

«Երկաթուղու կոնցեսիայի հետ կապված շրջադարձերում մենք տեսնում ենք այն, ինչ տեղի է ունենում Հայաստանի ղեկավարության կողմից հռչակված Եվրամիության հետ մերձեցման քաղաքականության տրամաբանության մեջ, որը տանում է տնտեսական անկման եւ վերածվում է Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված ռազմաքաղաքական դաշինքին անդամակցության: Արդյո՞ք հայերը ցանկանում են դառնալ Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված դաշինքի մաս, դա նրանց որոշելիք հարցն է: Մեզ համար պարզ է, որ նրանք պատրաստվում են դրան, ինչպես որ ակնհայտ են նման զարգացման երկարաժամկետ, ծանր հետեւանքները»: Օվերչուկի այս խոսքերը նշանակում են, որ Ռուսաստանը հասկանում է, որ Հայաստանի իշխանությունը գործում է դրսի թելադրանքով, եւ Հայաստանը վերածում են Ռուսաստանի դեմ թշնամի երկրի, թեեւ խոսքով փորձում են խաբել ու բարեկամ ձեւանալ, եւ խոստանում է դրա դիմաց ծանր հետեւանքներ: Նա մանրամասնում է, թե ինչ ծանր հետեւանքների մասին է խոսքը. «Իհարկե, ոմանք կպնդեն, որ Հայաստանն ունի եվրոպական հեռանկարներ, եւ ԵԱՏՄ-ի հետ կապերը միայն այնքան ժամանակ են պետք, մինչեւ ԵՄ-ի հետ առեւտուրը չփոխարինի ԵԱՏՄ-ի հետ առեւտրին: Այնուամենայնիվ, եվրոպացիների հետաքրքրությունն արդեն նկատվել է հայկական ապրանքները եվրոպական շուկա ներմուծելու հարցում: Վստահ եմ, որ հայ գործարարներն իրատեսորեն գնահատում են հայկական մրգերի եւ բանջարեղենի, հայկական հանքային ջրի եւ հայկական ալկոհոլի՝ եվրոպական շուկայում վաճառքի հեռանկարները: Այս ոլորտներում աշխատողները, ինչպես նաեւ այդ ապրանքները տեղափոխողները նույնպես պետք է հաշվի առնեն սա»: Ուզում եք գնալ Եվրոպա՞, ձեզ բարի ճանապարհ, բայց իմացեք, որ մենք մեր շուկան փակելու ենք հայկական մրգի, բանջարեղենի, հանքային ջրերի, ալկոհոլի եւ մյուս ապրանքների առաջ, եւ թող այդ ոլորտում զբաղվող գործարարները եւ շարքային աշխատողները մտածված ընտրություն անեն՝ ուզում են ԵՄ անդամ դառնալ, թե՞ մնալ ԵԱՏՄ-ում, ուզում են գործազուրկի կարգավիճակում ունենալ առանց վիզա ԵՄ գնալու արտոնությո՞ւն:

Հայկական ընկերություններին Ռուսաստանում գործելու հնարավորությունից զրկելը Օվերչուկը կրկնում եւ հիմնավորում է մեկ այլ ձեւակերպմամբ. «Իրականությունն այն է, որ հայկական երկաթուղին, եթե այն գոյատեւի, կմնա սեփական տնտեսության կարիքները սպասարկող գիծ, որի իրական հեռանկարները կապված են ԵԱՏՄ-ի հետ: Մեր շահագրգռվածությունն է՝ ավելացնել առեւտուրը Հայաստանի հետ, ինչպես տարածաշրջանի բոլոր պետությունների հետ, բայց եթե մեզ ասեն, որ ռուսական ընկերությունների ներկայությունը Հայաստանում չի համապատասխանում Հայաստանի շահերին, ապա, փոխադարձության սկզբունքի հիման վրա, արդարացի է հարցնել. եթե ռուսական ընկերություններն ու ձեռնարկատերերը չեն կարող գործել եւ գումար վաստակել Հայաստանում, ապա ինչո՞ւ պետք է հայկական ընկերություններն ու ձեռնարկատերերը կարողանան գործել եւ գումար վաստակել Ռուսաստանում»:

Խնդիրն այն չէ, որ Օվերչուկը Հայաստանին կամ Հայաստանի իշխանությանն ինչ-որ բան է թելադրում կամ պարտադրում. նա ընդամենը ասում է՝ Հայաստանի հասարակությունը թող որոշի՝ առաջնորդվելու է Հայաստանի՞ տնտեսական շահերով, թե՞ արտաքին թելադրանքով, երկրում քաղաքականություն որոշողը հարյուր հազարավոր գյուղացիները, գործարարները, բեռնափոխադրողները, այդ ընկերություններում աշխատող վարորդները, բանվորներն ու ծառայողնե՞րն են եւ նրանց շահերը, թե՞ դրսից ֆինանսավորում ստացող եւ դրսի շահերը սպասարկող մի քանի տասնյակ կամ գուցե հարյուր արեւմտամետներն ու արեւմտասերները: Օվերչուկը հրապարակային ասել է այն, ինչ Նիկոլ Փաշինյանին փակ դռների հետեւում ասել է Վլադիմիր Պուտինը: Փաշինյանն իր ընտրությունը կատարել է, իսկ հայ հասարակությունն այդ ընտրությունը կանի երկու ամսից:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

# ԻՆՉՈՒ ԷՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ ՄՈՍԿՎԱ



Ռուս քաղաքագետ Դմիտրի Ռոդիոնովը կարծում է, որ Նիկոլ Փաշինյանի՝ Մոսկվա կատարած աշխատանքային այցի նպատակը մեկն էր՝ ցույց տալ, որ այն մեղադրանքները, որոնք ներկայում հնչում են իր դեմ, ներառյալ նաեւ Ռուսաստանի հետ կապերը խզելու մասով, չեն համապատասխանում իրականությանը: Եվ դա արվում է Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրություններից առաջ: Ռոդիոնովն «Ալֆանյուզի» հետ զրույցում ասել է. «Գիտեք, որ վերջին շրջանում Փաշինյանին մեղադրում են մշտապես այն բանում, որ նա տանում է Ռուսաստանի հետ հարաբերությունների խզման, որն ի վերջո բերելու է ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից Հայաստանի դուրս գալուն, Գյումրիից ռուսական բազայի դուրսբերման եւ այլն: Նույնիսկ նրա ընտրազանգվածում մեծ մասը ռուսամետ տրամադրություններ ունի, եւ կողմ են, որ Ռուսաստանի հետ Հայաստանը պահպանի բարեկամական եւ դաշնակցային հարաբերություններ: Նույնիսկ նրանք, ովքեր կողմ են, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունները վերականգնվեն, ընդհանուր առմամբ, հակառուսական տրամադրություններ ունեցող մարդիկ չեն: Ու հենց այս ընտրողներին էր պետք ցույց տալ, որ բոլոր հակառուսական մեղադրանքներն իրականությանը չեն համապատասխանում: Այստեղից էլ գալիս են բոլոր այն PR տեսանյութերը, որտեղ նա ասում է, որ Ռուսաստանը մեր բարեկամն է, ու չպետք է մտածել, թե Հայաստանը հեռանում է Ռուսաստանից: Այդ ամենը մասամբ բեմականացումներ են, ոչ պատահաբար նկարահանված նյութեր: Նախընտրական PR արշավ»:

Ռոդիոնովը կարծում է, որ Փաշինյանը ձգտում է ցույց տալ, որ Հայաստանը միանշանակ խաղադրույք չի կատարում Արեւմուտքի կամ Թուրքիայի վրա, այլ փորձում է բազմավեկտոր քաղաքականությամբ առաջ գնալ: Սա՝ այն դեպքում, երբ, ըստ ռուս փորձագետի, Փաշինյանը Հայաստանի ինքնիշխանությունը հանձնել է Թուրքիային եւ Միացյալ Նահանգներին: Մի կողմից, Ռուսաստանին բարեկամ է համարում, մյուս կողմից՝ խոսում Ռուսաստանի կողմից Հայաստանում կայանալիք ընտրություններին միջամտության մասին եւ դիտորդական դեսանտ բերում Երեւան, որպեսզի ընտրություններում Ռուսաստանի ենթադրյալ միջամտությունը կանխվի: Այս ամենը, Ռոդիոնովի արձանագրմամբ, ուղեկցվում է Փաշինյանի կողմից սեփական ժողովրդի պատմության սրբագրման պրոցեսով, երբ միտումնավոր կերպով մոռացության է մատնվում Հայոց ցեղասպանության թեման, ղարաբաղյան հարցն էլ փորձ է արվում հանել օրակարգից, իսկ պատմական Հայաստանն էլ փոխարինվում է, այսպես ասած, «իրական Հայաստանով», որն առաջ է մղում անձամբ Փաշինյանը՝ որպես գաղափար:

«Մենք գիտենք, որ արդեն ակնհայտ խոսվում է այն մասին, որ Հայաստանում փոխվելու է Սահմանադրությունը, ինչպես պահանջում է Ալիեւը»,- նկատել է Ռոդիոնովը: Այս ամենի ֆոնին Փաշինյանն ամեն գնով ուզում է ցույց տալ, որ Երեւանը շարունակում է մնալ Մոսկվայի կողքին: Ու որքան մոտենան ընտրությունները, այնքան Մոսկվայի ուղղությամբ դիֆերամբները կարող են շատանալ՝ եզրակացնում է փորձագետը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կինոնկարներ, որոնք արժե դիտել այս օրերին

Ավագ շաբաթվա այս օրերը քրիստոնյաների համար կրոնական ամենախորհրդավոր, հուզական օրերն են, որոնք խորհրդանշում են Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերը՝ Վերնատան ընթրիքից մինչեւ Գեթսեմանիի աղոթք, մատնություն, չարչարանքներ, խաչելություն, մահ եւ Հարություն:

Ավագ շաբաթվա ընթացքում սովորաբար մարդիկ ավելի են կենտրոնանում իրենց ներհայեցողական, ներանձնական կրոնական մտորումների եւ աղոթական կյանքի վրա: Այս օրերին համահունչ բազմաթիվ կինոնկարներ են նկարահանվել: Ներկայացնենք մի քանիսը, որոնք համահունչ են այս օրերի խորհրդին.

«Քրիստոսի չարչարանքները». 2004 թվականին էկրան բարձրացած այս կինոնկարը քրիստոնեական կինոարվեստի գլուխգործոցներից է: Ռեժիսորը Մել Գիբսոնն է: Սա բացառիկ ֆիլմ է, որը դարձել է հազարավորների դարձի գալու առիթ: Աչքի է ընկնում պատմական բացառիկ ճշգրտությամբ եւ հուզական ու էմոցիոնալ արտահայտչականությամբ: Պատմում է Քրիստոսի երկրային կյանքի վերջին ժամերի մասին՝ Գեթսեմանիի պարտեզում աղոթքից մինչեւ Գողգոթա խաչ բարձրանալու ընթացքը: Հատկապես ուշագրավ է, որ կինոնկարում կիրառվում են հին լեզուները՝ արամեերենը, լատիներենը, ինչը հավելյալ պատմական վավերականություն է հաղորդում ժապավենին: Ֆիլմում առկա են Քրիստոսի չարչարանքները պատկերող բավականին խիստ տեսարաններ, ինչն օգնում է հասկանալու Աստվածորդու ինքնազոհաբերության, այդ համատեքստում կրած չարչարանքների ու տառապանքների գինը եւ այն մեծ փրկագինը, որը Նա վճարում է Իր արյամբ՝ մարդկության համար:

«Մատթեոսի Ավետարանը». քրիստոնեական Ավետարանի դասական էկրանավորում է: Կինոնկարն էկրան է բարձրացել 1964-ին: Ռեժիսորը Պյետրո Պաոլո Պազոլինին է: Ֆիլմն աչքի է ընկնում գրեթե փաստավավերագրականությամբ: Ավետարանական տեքստից եւ ոչ մի խազ սցենարը չի շեղվում: Այն հոգեւոր խորությամբ եւ համարյա ասկետիկ գեղագիտությամբ ֆիլմ է: Շատ մասնագետներ այն համարում են Ավետարանի ամենահարգված կինոմեկնաբանություններից մեկը:

«Հիսուս Նազովրեցի». Ֆրանկո Զեֆերելիի մեծածավալ հեռուստատեսային նախագիծն էկրան է բարձրացել 1977-ին եւ ներկայացնում է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքը՝ Ծնունդից մինչեւ Հարություն: Հանդես են եկել մի շարք հայտնի դերասաններ:

«Թագավոր թագավորաց. Նիկոլաս Ռեյի դասական սուրբգրային էպիկական էկրանավորումը թողարկվել է 1961 թվականին: Աչքի է ընկնում մասշտաբային պատմական տեսարաններով եւ դրամատիկական պատումով: Ներկայացնում է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքն ու քարոզչությունը: Աչքի է ընկնում վառ բեմադրությամբ եւ 20-րդ դարի Հոլիվուդին հատուկ հանդիսավոր պատմողականությամբ:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԳՈՐԾԻ Է ԴՐԵԼ ՈՒ ՄԻ ԿՈՂՄ ՔԱՇՎԵԼ

Վանաձորի կենտրոնական հատվածում տաքացուցիչների կիսակործան գործարանի երկհարկանի շենքի տանիքին կախված մաշված ցուցանակն է միայն հիշեցնում արդյունաբերական հզոր ձեռնարկության երբեմնի փառքի մասին: Գործարանը քայքայվում է. կոտրված պատուհանների խոռոչները թշվառ հայացքով նայում են անցորդներին: Շենքի մի հատվածը տարիներ առաջ նորոգվեց, բայց վերագործարկման փոխարեն բացվեց հերթական առեւտրի կենտրոնը՝ կահույքի վաճառասրահը:



Իմ ճանապարհին հաճախ անցնում է այդ գործարանի մոտով: Վաղուց էի նկատել միշտ այս մասով քայլող մի քաղաքացու: Չէի հիշում՝ որտեղից եմ ճանաչում, մինչեւ օրերս ինքը մոտեցավ ու հիշեցրեց. «1986 թվին Դուք այցելեցիք մեր գործարան, հետո «Կայծ» թերթում հոդված գրեցիք: Երանելի տարիներ էին. գործարանը շնչում էր, նրա հետ՝ հարյուրավոր աշխատողներ: Ահա ինչ է մնացել... Հիշո՞ւմ եք»:

Հիշում եմ: Տաքացուցիչների գործարանը քաղաքի 24 արդյունաբերական ձեռնարկություններից մեկն էր, մեծ համբավ ուներ ամբողջ Խորհրդային Միությունում: Հպարտանում էինք, որ Վանաձորի (այն ժամանակ՝ Կիրովական) գործարանների արտադրանքն արտահանվում է աշխարհի 70 երկիր: Տաքացուցիչներ ուղարկվում էին ԽՍՀՄ եւ Վարշավյան պայմանագրի սոցիալիստական երկրներ: Ռազմավարական նշանակության արտադրատեսակները կիրառվում էին ռազմարդյունաբերության եւ տիեզերագնացության ոլորտում՝ ապահովելով տանկերի, նավերի եւ այլ տեխնիկայի շարժիչների արագ տաքացումը: Իմ այցելության օրը գործարանում նույնիսկ ռեկորդ էր գրանցվել. վանաձորյան տաքացուցիչն ապահովում էր մինչեւ 1700 աստիճան ջերմություն՝ եթե կապիտալիստական երկրների տանկերի շարժիչներն անհրաժեշտ ջերմաստիճանին հասնում էին մոտ 2 րոպեում, ապա մեր տաքացուցիչներով՝ ընդամենը մեկուկեսում: Հենց այդ պատճառով էլ, չնայած մեծ պահանջարկին, արտադրանքն այլ երկրներ չէին արտահանվում:

«Կարծում եք՝ այսօր պահանջարկ չէ՞ր լինի»,- կարծես կռահելով մտքերս՝ հարցրեց զրուցակիցս: «Ամեն նոր իշխանության գալով մտածել եմ՝ մեր գործարանը կվերագործարկվի: Ախր, խոստանում էին: Ամեն անգամ սխալվել եմ»: Նրա խոսքում դառնություն կար: Որոշեցի դառը հումոր անել. «Այս անգամ հաստատ չեք սխալվի՝ պետք է ընտրել ՔՊ-ին, եւ մեր բոլոր երազանքները շուտով կիրականացնեն, ինչպես խոստանում է նրանց առաջնորդը»: Զարմացած նայեց ինձ ու լռեցուն բնորոշ անմիջականությամբ հարցրեց. «Նիկոլի՞ հետ դարձյալ հույս կապենք: Կասե՞ք՝ անցած ութ տարում ինչու մատը մատին չտվեցին: Անցած ութ տարում մեր երկրի արդյունաբերության բոլոր «հյութերը» ցամաքեցրին: Հիմա հավատանք, որ ինչ-որ բան կփոխե՞ն: Չէ, նրանք դրա համար չեն գալիս: Նրանք իշխանություն ունենալու, երկրի կործանումն ավարտին հասցնելու համար են գալիս»: Ապա հավելեց. «Նրանք ունեն ցածր մակարդակ, բայց մի քանի տարում ձեռք են բերել բարձր կենսամակարդակ»:

Այնուհետեւ երկար խոսեց. «Ոմանք ասում են՝ չեն աշխատում, Նիկոլը պարապ թրեւ է գալիս, հարցնում են՝ մարդն ինչքա՞ն ժամանակ պիտի չաշխատի, որ գործից հանեն... Բայց սխալվում են: Էն օրն էլ մի խելացի բժշկուհի ասաց. «Այ վարչապետ, ուրիշ գործ չունե՞ս, որ պարապ պտույտ ես տալիս փողոցներով: Էս երկրի հոգսերն ո՞վ է տանելու, երբ դուք միայն ուտելով ու դատարկաբանելով եք զբաղված»: Բայց թե՛ այդ բժշկուհին, թե՛ մեր ժողովրդի միամիտ մասը սխալվում է. Նիկոլն ու նիկոլականները երբեք պարապ չեն եղել: Նրանք եռանդով զբաղված են եղել ու շարունակում են զբաղվել երկրի կործանման տիտանական աշխատանքով: Չէ՞ որ իր ծրագրերը գրեթե ավարտել է՝ պատերազմ հրահրեց, Արցախը հանձնեց, տարածքներ զիջեց, հիմա քանդում է մնացածը՝ բանակը, պաշտպանունակությունը, հասարակության միասնությունը: Նա համառ է, անընդհատ «աշխատող», օրը 24 ժամ՝ առանց դադարի: Իսկ այն, ինչ ինքը չի հասցնում, լրացնում են թիմակիցները՝ նախարարներ, պատգամավորներ, տարբեր «ռանգի» ու մակարդակի պաշտոնյաներ: Իրավական համակարգն էլ իր հերթին է «աշխատում»: Նիկոլը գործի է դրել բոլորին: Հիմա էլ դուրս են եկել ձայն մուրալու: Դա գործ չէ՞: Կյանքի ու մահվան պայքար է: Բայց իմ խոսքը ոչ այնքան իրենց, որքան մեր ժողովրդին է վերաբերում: Էլ ի՞նչ պիտի անեն, որ հասկանանք՝ իրենց նպատակը որն է: Կասկածում եմ անգամ՝ սրանք Հայաստանի՞ քաղաքացիներ են: Դուք լրագրող եք. գրեք այս ամենի մասին: Իմ անունը մի տվեք: Գրեք՝ տաքացուցիչների գործարանի նախկին աշխատող: Վստահ եմ՝ իմ խոսքին կմիանան շատերը՝ քիմիագործներ, տրիկոտաժագործներ, մեքենաշինարարներ... Բոլոր նրանք, ովքեր հասկանում են արդյունաբերության ու հայրենիքի արժեքը: Հասկացեք՝ երեխաներ ունեմ, թոռներ... Սրանք վրիժառուների խումբ են, կարող են մեր սերունդներին վնաս տալ»:

Ես միայն մի դիտարկում արեցի՝ սրանց հաջողվել է մարդկանց մեջ վախ սերմանել: Մարդիկ վախենում են, բարձրաձայն չեն բողոքում, չեն պահանջում: Եվ հենց այդ պատճառով նրանք «հաջողությամբ» անարգում են մեր սրբությունները:

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

# ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ Է

Մենք գրել էինք Սարդարապատի դպրոցի տնօրեն Կարինե Սմբատյանին պաշտոնանկ անելու մասին. նրան հրահանգել են Արցախի դրոշը հանել, հրաժարվել է, ինչից հետո առաջարկել են դիմում գրել, հեռանալ: Բայց պարզվում է՝ սա դեռ ամբողջը չէ. նրան հեռացնելը քաղաքական դրդապատճառ ունի:

Սմբատյանը, պարզվում է, «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ է, պատգամավորի թեկնածու: Այդ մասին իմացել են իշխանություններն ու, իրենց ոճին հավատարիմ, հետեւել Սմբատյանի ու նրա ընտանիքի գործունեությանը: Ու քանի որ մասնագիտական գործունեության մեջ անօրինական բան, որեւէ թերացում չեն գտել, այլ պատճառներ են որոնել՝ պաշտոնից ազատելու համար: Պարզվում է՝ Սմբատյանը, երեխայի հիվանդության պատճառով, իր 8-օրյա արձակուրդի օրերին մեկնել է Գերմանիա՝ երեխայի բժշկի հետ հանդիպելու, հիվանդության պատմությունն ու դիսկերը փոխանցելու, եւ Հայաստան է վերադարձել մեկ օր ուշացումով, որովհետեւ զրույցը բժշկի հետ երկարել է՝ ուշացել է ինքնաթիռից: Անմիջապես հետդարձի տոմս է գնել՝ Չեխական ավիաուղիներով, բայց 1 օրվա ուշացումը «քթից են բերել»՝ կանչել են մարզպետարան: Նրան ընդունել են մարզպետի տեղակալ, ԱԱԾ-ական Արամ Գրիգորյանն ու կրթության վարչության պետ Սոնյա Բուդաղյանը:

Հաշվի չառնելով երեխայի առողջության հետ կապված մոր հոգեվիճակը, սկսել են վիրավորել, թե դպրոցը սեփական կլան է դարձրել, գերմանացիներ է տանում-բերում, նվերներ ստանում, որոնց մասին մարզպետարանին չի հայտնում: Նկատենք, որ Սարդարապատի դպրոցը գյուղական եզակի ուսումնական հաստատություններից է, որտեղ կրթությունն իրականացվում է նաեւ միջազգային ծրագրերով: Դպրոցը երկար տարիներ համագործակցում է Գերմանիայի կառավարության հետ. կազմակերպվում են դպրոցականների փոխադարձ այցեր, կրթական միջոցառումներ, անցած տարի էլ գերմանական կողմը դպրոցին կոնֆերանսների սրահ է նվիրել: Մարզպետարանում դա են «երեսով տվել»: «Նվերներ եք ստանում, մենք տեղյակ չենք»,- ասել է կրթության վարչության պետը: Մարզպետարանում տեղի ունեցած ծանր խոսակցությունից հետո Կարինե Սմբատյանը հասկացել է, որ հեռացնելու են պաշտոնից: Հրամանը չի ուշացել. այն դպրոց է հասել ժամեր անց՝ անվստահության հիմնավորմամբ: Չի ուշացել նաեւ պաշտոնակատարի նշանակումը: Շատ արագ տնօրենի թափուր պաշտոնի համար ուսուցչական կազմին է ներկայացվել ԱԻՆ-ի ինչ-որ պաշտոնյայի կին:



Հիշեցնենք նաեւ, որ Սարդարապատի դպրոցի հիմնական մասնաշենքն անցած տարվա օգոստոսից քանդել են, որ վերակառուցեն, bայց մինչ օրս որեւէ աշխատանք չի իրականացվել: Դպրոցում կարծում են, որ միտումնավոր են ձգձգել՝ Սմբատյանից ազատվելը վաղուց է ծրագրված եղել, որից հետո շինարարությունը կսկսեն իրենց սրտի տնօրենի պաշտոնավարման շրջանում:

**Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՆԻԿՈԼԻԶՄԻ «ՖԵՆՈՄԵՆԸ». ՈՒՐԱՑՈՒՄ, ՕՐԵՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱ



**Պետրոս ՄԱԿԵՅԱՆ**

2020թ. 44-օրյա պատերազմում Հայաստանը կանխորոշված պարտության տանելուց հետո նիկոլիզմը մեկ խնդիր է լուծում՝ ամեն գնով պահել իշխանությունը, ստորադասելով պետական ու ազգային շահերը, կատարելով թշնամու բոլոր պահանջները, մուրալով «խաղաղության պայմանագիր»՝ ստորացուցիչ պայմաններով, տանելով վերջնական կապիտուլյացիայի:

**Մաս 4**

2001թ. ամռանը Փաշինյանն այցելեց Վաղարշ Վաղարշյան 12 հասցեում գտնվող «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության կենտրոնական գրասենյակ, այն գրասենյակը, որը Սերժ Սարգսյանը «դատարանի վճիռներով» 2009-12թթ. ամբողջությամբ առգրավեց, որի մասին իրազեկված էր Ն. Փաշինյանը, եւ մեր կողմից իրեն նվիրված «Հայկական ժամանակ» թերթում այդ մասին տասնյակ հոդվածներ են հրապարակվել:

2018թ. վերջին կուսակցությունը դիմեց պատկան մարմիններին, այդ թվում՝ Գլխավոր դատախազություն՝ համոզված լինելով արդարությունն օրինական ճանապարհով վերականգնելու մեջ, եւ, ի զարմանս մեզ, ստացանք նախկին իշխանություններին հարիր նույնաբովանդակ պատասխան, որի մասին փորձեցինք իրազեկել վարչապետին: Ապա 3 ամիս չստանալով պատասխան, երկրորդ դիմումը գրեցինք, կրկին ստացանք Սերժ Սարգսյանի ժամանակի պատճենահանված պատասխան: Վերոշարադրյալը՝ որպես ի գիտություն:

Նիկոլ Փաշինյանը ժամանելով՝ ներկայացրեց իր այցի նպատակը, այն է՝ «Հայկական ժամանակ» թերթի նախորդ տարվա ֆինանսական գործունեությունը եւ մի ծրար ուղղեց ինձ, չգիտեմ, թե որքան գումար էր մեջը: Ծրարն առանց բացելու վերադարձրի՝ իրեն ասելով. «...սա թող լինի իմ ներդրումը գործող ռեժիմի դեմ պայքարում. երբ ժողովրդի կամքով Հայաստանում իշխանություն կձեւավորվի, եւ թերթը կաշխատի նորմալ պայմաններում, այն ժամանակ կվերադառնանք այս թեմային»: Հաջորդած 15 տարիներին ես ստորագրում էի իմ շահաբաժնի հասույթի փաստաթուղթը եւ գումարը թողնում իրեն, բացառությամբ 2009թ., երբ գտնվում էի կալանավայրում, նախորդ տարվա շահաբաժնի մի մասը փոխանցել էին ընտանիքիս: Միայն 2016-ին ինքս եմ դիմել Նիկոլին ու ստացել պահանջվող գումարը՝ որդուս վիրահատության համար: Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո ինձ չեն իրազեկել «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի գործունեության եւ իմ շահաբաժնի մասին: 2021-ին դիմեցի «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի տնօրենին, որպեսզի ինձ տեղեկատվություն տրամադրեն 2016-2020թթ. ընկերության գործունեության, այդ թվում՝ իմ շահաբաժնի մասին: Չստանալով պահանջված բոլոր փաստաթղթերը՝ ստիպված դիմեցի պետական ռեգիստր, որտեղ պարզվեց, որ 2014-ին Աննա Հակոբյանն իր 70 տոկոս շահաբաժինը, օրենքները շրջանցելով, նվիրաբերել է Կիմա Մկրտչյանին, ավելի ուշ պարզ դարձավ, որ նվիրառուն Աննայի մայրն է:

Երբ վերլուծում ենք Ն. Փաշինյանի իշխանավարման տարիներին «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի գործունեությունը, որը հրատարակում է «Հայկական ժամանակ» թերթը, ապա հակիրճ կարելի է բնութագրել տարատեսակ կոռուպցիոն սխեմաների, փողերի լվացման ու հովանավորչության առկայություն, ինչի մասին 2022թ. օգոստոսին իմ հաղորդման հիման վրա նախկին գլխավոր դատախազի հանձնարարությամբ քրեական վարույթ է հարուցվել: 16 ամիս անց գործն առանց քննության՝ նոր գլխավոր դատախազի հրահանգով կարճվեց: Բողոքարկեցի եւ անցա բոլոր դատական ատյաններով, սակայն որոշումը թողեցին անփոփոխ: Արձանագրենք հետեւյալ փաստը, որ 2019-ին «Դարեսկիզբ» ՍՊԸ-ն կորոնավիրուսի համաճարակի գագաթնակետի ժամանակ աշխատել է 22.6 միլիոն ՀՀ դրամ շահույթով, իսկ 2020-ին աշխատել է 8.3 միլիոն դրամ վնասով: Հավելեմ, որ, ըստ Նիկոլ Փաշինյանի՝ 2021թ. պատգամավորի թեկնածու գրանցման հայտարարագրի, «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից 2020 թվականին Աննա Հակոբյանը եւ Մարիամ Փաշինյանը շուրջ 10 միլիոն դրամ աշխատավարձ են ստացել, ինչը հիմնավորում է փողերի լվացման փաստը: Նաեւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019-20թթ. ՍՊԸ աշխատավարձի ֆոնդը կրկնապատկվել է նախորդ տարիների համեմատ, սակայն էական փոփոխություն չի եղել թերթի տպաքանակում եւ տպագրական ծախսերում, ապա կարելի է ենթադրել, որ լրագրողների քողի տակ ֆեյքերի խումբ է աշխատել, եւ պատահական չէ, որ երբ դիմեցի ՍՊԸ տնօրենին՝ տրամադրելու հաստիքացուցակը՝ աշխատողների անուն-ազգանունով եւ աշխատավարձի չափով, մնացի անպատասխան, ինչն օրենքի պահանջով պարտավոր էին անել:

Եթե ձեռքը սովոր է թռցնելուն, ապա որեւէ ձեւով չես կարող դա կանխել, առավել եւս, երբ այդ ձեռքերն իրենք են որոշողը՝ որտեղից ինչքան թալանել, ինչի ականատեսն ենք լինում պետական բյուջեի շարունակական փոշիացման եւ յուրացման հարցում: Նիկոլիզմն իսպառ մերժում է բարոյական արժեքները, եւ գործընկերներին քցելը, ուրանալը նրա արժեհամակարգն են, իսկ առերեւույթ կոռուպցիայի եւ հովանավորչության դեմ պայքարելը կեղծ է ու մանիպուլյատիվ բնույթ է կրում:

**ՀԳ.** *Իմանալով, որ Նիկոլը փորձում է ամեն ինչ անձամբ կառավարել, վերոշարադրյալը բացահայտում է երկրի վարչապետի իրական դեմքը եւ նիկոլիզմն ամբողջությամբ:*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԱՄՆ-Ն ՀԱՍԿԱՆՈՒՄ Է, ՈՐ ՀՈՒՍԱԼԻ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՆՎԻՐՎԻ ԻՍՐԱՅԵԼԻՆ



**Արա ԱԼՈՅԱՆ**

«Հրապարակի» զրուցակիցը «Մոշե Դայան» Մերձավոր Արեւելքի ուսումնասիրությունների կենտրոնի պաղեստինյան, այդ թվում՝ իսրայելցի արաբների հարցերով փորձագետ **Հարել Խորեւն** է (Իսրայել):

**- Մերձավոր Արեւելքում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Իրանի ղեկավարները սպանվեցին, զոհվում են անմեղ քաղաքացիներ՝ ամբողջ տարածաշրջանում, այդ թվում՝ Իսրայելում: Ե՞րբ կավարտվի այս խելահեղ արյունահեղությունը:**

- Անմեղ մարդկանց տոկոսը զինյալների համեմատ աննշան է, սակայն իրանցիները պլանավորում էին միջուկային ռումբով բազմաթիվ անմեղ մարդկանց սպանել, եւ իրենց 47 տարվա ռեժիմի ընթացքում նրանք սպանեցին բազմաթիվ անմեղ մարդկանց՝ դա իրենց գլխին բերելով, եւ պատերազմն ապացուցում է, որ նրանց ռազմավարությունը հենց սկզբից կեղծ էր:

**- Ձեր խոսույթը կոշտ է: Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն օրերս կարծիք հայտնեց, որ Իրանում պատերազմը կարող է ավարտվել ավելի շուտ, քան «մարդիկ կարծում են»: Սա նշանակում է, որ ռազմական նպատակներն իրագործվե՞լ են:**

- Իսրայելի տեսանկյունից ռազմական նպատակները մի քանի օրվա ընթացքում իսկապես հասան վերջնական հանգրվանին. հարձակման ենթարկվեց առանցքային թիրախների 100%-ը եւ ոչ կարեւոր թիրախների ավելի քան 80%-ը:

**- ԱՄՆ-ի Ազգային հակաահաբեկչական կենտրոնի (NCTC) նախկին տնօրեն Ջո Քենթը, որը հրաժարական է տվել Իրանի դեմ պատերազմին դեմ լինելու պատճառով, հերքել է իսրայելական հետախուզության տվյալները եւ պնդել, որ Իրանը միջուկային զենք ստեղծելու եզրին չէր: Նա նշել է, որ Իսրայելն ԱՄՆ-ին է դիմում «Իրանից բխող սպառնալիքների» կանխատեսումներով, սակայն դրանք սովորաբար չեն իրականանում:**

- Ջո Քենթը լայնորեն դատապարտվեց թե՛ դեմոկրատների, թե՛ հանրապետականների կողմից, երբ բացահայտեց իր հակասեմականությունը, նույնիսկ մեղադրեց Իսրայելին՝ ԱՄՆ-ի վրա սեպտեմբերի 11-ի հարձակման համար: Նա սկզբից ճիշտ մարդը չէր՝ այս բարձր պաշտոնում նշանակվելու համար, գտնվում է ՀԴԲ-ի հետաքննության տակ՝ գաղտնի փաստաթղթերի արտահոսքի համար: Ամերիկացիների մեծ մասը հիմա հասկանում է, որ նա ծայրահեղ աջ դավադիր է:

**- Դա թողնենք ամերիկացիներին, իսկ տպավորությունն այն է, որ Թրամփն իրականում սպասարկում է հրեական լոբբինգի շահերը: Այսինքն, Իրանի դեմ պատերազմի մեջ ներքաշվել է իսրայելական կողմի հզոր ազդեցության պատճառով: Բացի այդ, քիչ չեն ԱՄՆ-ի եւ Իսրայելի քաղաքացիներ, քաղաքական գործիչներ, որոնք դեմ են այս արյունահեղությանը եւ հոգնել են պատերազմներից: Իսրայելում ի՞նչ տրամադրություններ են, մանավանդ որ երկիրը պատերազմում է մի քանի ճակատով, այդ թվում՝ Լիբանանում:**

- Այս փաստարկը տարածված է բոլոր տեսակի հակասեմիտների՝ թե՛ ձախերի, թե՛ աջերի շրջանում, բայց շատ անմիտ է կարծելը, որ նախագահ Թրամփի նման մեկը կներքաշվի պատերազմի մեջ միայն Իսրայելի համար: Միացյալ Նահանգները մեծապես շահագրգռված է՝ կանխելու Իրանի միջուկային տերություն դառնալը: Միացյալ Նահանգները ցանկանում է կանգնեցնել Չինաստանի ընդլայնումն այդ տարածքում եւ կառուցել ամերիկամետ երկրների առանցք այս տարածաշրջանում: Նրանք ցանկանում են վերահսկել առեւտրային ուղիները, վերահսկել նավթի այս հատվածը՝ Չինաստանի հետ էներգետիկ աղբյուրների շուրջ մրցակցության մեջ: Ոչ պակաս կարեւոր է, որ ԱՄՆ-ն հասկանում է, որ ամերիկամետ արաբական պետություններին եւ, իհարկե, Իսրայելի նման հուսալի դաշնակիցներ պահելու համար պետք է նաեւ նվիրված լինել նրանց: Սա միակողմանի փողոց չէ, այլ երկկողմանի փողոց է, որտեղ ԱՄՆ դաշնակիցները նվիրված են դրան եւ հակառակը, ուստի Իսրայելի կողմից Միացյալ Նահանգներին ներքաշելու վերաբերյալ այս բոլոր փաստարկները հակասեմական են:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am